

Լ. Դ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

Գրաբարի լեզվա-քերականական իրողությունների բացահայտումը նպաստում է ոչ միայն գրաբարի, այլև մեր լեզվի զարգացման տարբեր փուլերի խոր և բազմակողմանի ուսումնասիրությանը:

Առավել հետաքրքրական ու գիտական հետազոտության անըսպառ նյութ ունի գրաբարի բայական համակարգը, որին, իհարկե, տարբեր առիթներով անդրադարձել են ուսումնասիրողները: Սակայն պետք է ասել, որ բայի հետ կապված որոշ հարցեր կամ դուրս են մնացել ուսումնասիրության ոլորտներից, կամ էլ բավարար լուծում չեն ստացել: Դա հատկապես վերաբերում է գրաբարի քերականական ժամանակների քննությանը:

Քերականական ժամանակը բայական կարևոր կարգերից մեկն է, լեզվում ժամանակային հարաբերությունների արտահայտման հիմնական միջոցը:

Գրաբարի քերականական ժամանակները ըստ կազմության բաժանվում են երկու խմբի՝ պարզ և բաղադրյալ: Վերջիններս ի տարբերություն պարզ ժամանակների, դասական շրջանում դեռևս չափն կիրառություն չունենին, այդ փսկ պատճառով առավել ուշադրություն ենք դարձրել պարզ ժամանակների կիրառական առանձնահատկությունների, նրանց իմաստային փոխանցումների քննությանը:

ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Իր հասարակական-արտադրական պրակտիկայում, առարկայական իրականության երևույթների գիտական իմացության

պարզեցնում մարդը դորժ ունի անընդհատ շարժվող մատերիայի հիմնական ձևերի՝ տարածության և ժամանակի հետ: Ժամանակը փխրիստություն մեջ բնորոշվում է որպես առարկայորեն գոյություն ունեցող, անսկիզբ ու անվերջ, մատերիայի գոյությունը պայմանավորող հատկանիշներից (ատրիբուտներից) մեկը:

Քերականական ժամանակը, դասական ըմբռնմամբ, ենթադրում է գործողության հարաբերություն խոսքի պահի, կամ որպես այդպիսին ընդունված որևէ այլ ժամանակակետի նկատմամբ:

Քերականական ժամանակը նույնպես գոյություն ունի առարկայորեն, բայց թյուրիմացություն կրինի կարծել, թե նա նույնական է փխրիստության-իրական ժամանակի հետ: Որոշ լեզվաբաններ նույնացնում են նշված հասկացությունները՝ քերականական ժամանակը համարելով առարկայական ժամանակի անմիջական արտացոլումը¹: Նման տեսակետները, իհարկե, միշտ են: Քերականական ժամանակը իր հիմքում ունենալով առարկայական ժամանակային հարաբերություններ, արտացոլում է առարկայական ժամանակը ոչ թե անմիջաբար, այլ միջնորդավորված ձևով՝ լեզվական կոնկրետ միջոցների օգնությամբ:

Անհրաժեշտ է տարբերել նաև լեզվի մեջ հանդես եկող ժամանակավորումը՝ քերականական ժամանակից: Ժամանակի զաղափար կարող են արտահայտել տարբեր խոսքի մասեր (մակբայները՝ այսօր, վաղը, երեկ, նույնիսկ որոշ գոյականներ՝ փեսացու, հուսնացու): Ժամանակ կարող են մատնանշել նաև բառակապակցությունները՝ 1869 թվականին ծնվեց Հովհաննես Թումանյանը: 1941 թ. հունիսի 22-ին, առավոտյան ժամը 5-ին, գերմանական ֆաշիստները ուխտագրոթորեն հարձակվեցին Սովետական Միության վրա:

Ճիշտ է, այս օրինակներում, այսպես թե այնպես, ժամանակի դաղափար արտահայտված է, սակայն այն ի հայտ է զալիս բառիմաստների միջոցով և կապ չունի քերականական ժամանակի հետ: Ժամանակի քերականական կարգը բնորոշ է հատկապես բային: Պարզ բայերը իրենց դիմային վերջավորություններով, իսկ բազաղրյալները՝ օժանդակ բայի խոնարհված ձևերով արտահայտելով թվի, դեմքի, եղանակի կարգերը, մատնանշում են նաև գործողության (եղելության) ժամանակը:

Ուրեմն քերականական ժամանակի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա բայական կարգ է:

¹ Հմմտ. Поспелов Н. С., Категория времени в грамматическом строе русского языка, М., 1953, էջ 137 (դոկտորական դիսերտացիա):

Մեղ ծանոթ լեզվաբանական գրականության մեծ մասի մեջ քերականական ժամանակների տարբերակման ելակետը համարվում է խոսքի պահը: Ինչպես դիպուկ նկատել է Գրասրին, ժամանակների սխտեմը նման է ջերմաչափի՝ 0 (զրո), զրոյից ցածր և զրոյից բարձր, որտեղ զրոն ներկա ժամանակն է կամ խոսելու պահը²:

Խոսքի պահի հետ կապված, քերականական ժամանակների տարբերակման հիմքում ընկած է գործողությունների հաջորդականությունը: Երկու տարբեր բայաձևեր (խոնարհված), որպես երկու տարբեր քերականական ժամանակներ կարելի է ընդունել միայն այն դեպքում, երբ նրանց արտահայտած գործողությունը որևէ ժամանակակետի նկատմամբ նախորդող է կամ հաջորդող: Այդպես է հենց անցյալ—ներկա—ապառնի ամենաընդհանուր բաժանումը:

Այս երեք ժամանակները, սակայն, ի վիճակի չեն արտահայտելու ժամանակային բոլոր իմաստների լեզվի մեջ:

Ժամանակաձևերի ու ժամանակային իմաստների բազմազանությունը մարդկային մտածողության զարգացման, վերացարկելու նրա ընդունակության արդյունքն է:

Անցյալ—ներկա—ապառնի ամենաընդհանուր բաժանման վերաբերյալ ուշագրավ դիտողություններ ունի ժամանակակից ակադեմիկոս լեզվաբան Ե. Կուրիլովիչը: «Անթույլատրելի է քննել,—գրում է նա,— «խոսքի պահ» /Անցյալի պահ—ը և «խոսքի պահ»/ «Ապառնի պահ»-ը որպես զուգահեռ հակադրություններ: Զի կարելի չփոթել լեզվական իրողությունը տրամաբանական-մաթեմատիկական իրողության հետ: Գրաֆիկորեն պատկերելու դեպքում այն պետք է լինի ոչ թե այսպես՝

անցյալ _____ ներկա _____ ապառնի

այլ ավելի շուտ այսպես՝

անցյալ _____ ներկա _____ ապառնի

↓
Ներկայի և անցյալի համեմատությամբ, որոնք արտահայտում են իրականությունը, ապառնին աբստրակտելով հնարավորություն, հավանականություն, սպասում և այլն, ներկայացնում է իրենից եղանակ: Եվ որպես այդպիսին՝ այն հակադրվում է ներ-

² Raul de la Grasserie, Grammaire comparee de categorie du temps, Paris, 1888, p. 2.

կա՝ անցյալ միասին վերցրած: Ապառնին եղանակ է, որը երբև-
մբն նշանակվում է: անհայտ տերմինով «կոնյուկտիվ» կամ «սուր-
յունկտիվ»³:

Մեղ թվում է, որ ուշագրության արժանի այս դիտողությունը
որոշ թերություններ ունի: Այնքան էլ ճիշտ չէ առանձնացնել ա-
պառնին մյուս ժամանակներից և դիտել որպես եղանակ: Չպետք
է շփոթել ժամանակի և եղանակի քերականական կարգերը և դր-
րանց զործառությունը լեզվի մեջ:

Կուրիլովիչի նշած հակադրությունը ոչնչով էլ «անթույլատրե-
լի չէ», մանավանդ երբ քննվում է միևնույն եղանակի մեջ: Օրի-
նակ՝ սահմանական եղանակի դեպքում այդ հակադրությունը ի-
րականանում է որպես հակադրություն, մի կողմից՝ ստույգ կա-
տարվողի և կատարվածի, մյուս կողմից՝ ստույգ կատարվողի և
ստույգ կատարվելիք գործողության միջև: Բացի այդ, ասպառնու-
նիմնական դերը ոչ թե գործողության իրական կամ ոչ իրական
լինելը նշելն է, այլ գործողության կատարման ժամանակի մատ-
նանշումը, հետևաբար և այն քերականական ժամանակ է:

Ապառնին չի կարելի դիտել որպես եղանակ, որովհետև այն
հանդես է գալիս տարբեր եղանակների մեջ՝ տարբեր ժամանակա-
ձևերով: Օրինակ՝ գրելու եմ (սահմ.), պիտի գրեմ (հարկդ.), գը-
րեմ (ըղձ.) և այլն:

Ապառնուն վերագրվող հնարավորության, հավանականու-
թյան, սպասումի և այլ հատկանիշները բնագրային երևույթներ
են (հատկապես հայերենի համար): Այսպես՝ գրելու եմ, կգրեմ,
պիտի գրեմ, գըմ ձևերը հայերենի ապառնի ժամանակի արտահայ-
տության ձևերն են: Դրելու եմ արտահայտում է ստույգ կատարվե-
լիք գործողություն (հավանականության տարրը այստեղ շատ
չնշին է): Մյուս ձևերի դեպքում ենթադրվում են և՛ ստույգ, և՛
հնարավոր, հավանական գործողություններ՝ կախված բնագրից:
Օրինակ՝ Ես անպայման վգրեմ: Եթե դար, կգրեի: Նստեմ ու գրեմ
Գրեմ, թե՞ չգրեմ:

Սրանք նույնպես վկայում են, որ ապառնին եղանակ չէ, այլ՝
ժամանակ, տեղադրված ժամանակային առանցքի վրա (ուղիղ
գիծ)՝ հակադրվելով ներկային ու անցյալին:

³ Е. Курилович, Очерки по лингвистике, М., 1962, стр. 143.

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամեն մի ժամանակաձևում իր հարաբերականորեն կայուն, անփոփոխ քերականական իմաստը՝ անկախ բնագրից: Հայերեն իմացող յուրաքանչյուր անձնավորություն առանց բնագրի էլ կիմանա գրեցի, գրել եմ, գրում եմ ձևերի իմաստները: Բայց առհասարակ քերականական ժամանակների գործառական յուրահատկությունը պարզելու համար այն պետք է քննել գործածության մեջ, բնագրում:

Եթե բնագիրը միայն վոնկրետացնում է այդ ձևերով արտահայտված իմաստները, ապա այդ դեպքում մենք գործ ունենք քերականական ժամանակների բուն կամ հիմնական կիրառության հետ: Սակայն երբեմն այս կամ այն քերականական ժամանակը կարող է հանգես գալ այլ ժամանակի իմաստով: Վերջին այս կիրառությունը ընդլայնական գրականության մեջ անվանվում է ժամանակների երկրորդական, փոխաբերական կիրառություն: Այն կարելի է կոչել նաև ոչ հիմնական կիրառություն: Երբ շեն համընկնում տվյալ ժամանակաձևի բուն իմաստն ու նույն ժամանակաձևի՝ բնագրից բխող իմաստները, ապա այդ դեպքում գործ ունենք ժամանակների երկրորդական կիրառության հետ: Օրինակ՝ Իսկ Բէլ ո՞չ թուի քեզ լից է իցէ Աստուած կենդանի. եթե ո՞չ անսանձիցս որչափ ուտէ հանապազ (Դանիել, ԺԲ, 5): Այստեղ ընդգրծված ապառնի ժամանակով դրված բայը հանդես է գալիս ներկայի իմաստով, հետևաբար և երկրորդական կիրառությամբ: Նման օրինակներ մենք կրեմք յուրաքանչյուր քերականական ժամանակի յուրահատկությունները քննելիս, այստեղ միայն կանենք որոշ ընդհանրացնող դիտողություններ ժամանակների երկրորդական կիրառության մասին:

1. Երկրորդական կիրառության դեպքում քերականական ժամանակը կորցնում է իր բուն կիրառության ժամանակ դրսևորվող որոշ հատկանիշներ (կերպային, եղանակային և այլն)՝ ձևը բերելով այն ժամանակի հատկանիշները, որի փոխարեն հանդես է գալիս:

2. Սակայն սխալ կլինի կարծել, թե երկրորդական կիրառությամբ հանդես եկող որևէ քերականական ժամանակ իր հատկանիշներով լրիվ համընկնում է այդ կիրառությունն արտահայտող հիմնական քերականական ժամանակին: Այլ կերպ ասած, եթե ասենք անցյալ կատարյալը հանդես է գալիս ապառնու փոխարեն, ա-

սլա բնութիւնն էլ այն չի ունենա ապառնի ժամանակի բոլոր հատկութիւնները: Խոսք կարող է լինել միայն իմաստների մասնակի նույնության մասին, որոնք պարփակված են տվյալ բնագրի շրջանակներում:

3. Քեռականական ժամանակների երկրորդական կիրառութիւնը բնորոշ է զգացմունքայնութիւն, հուզականութիւն, արտայայտականութիւն:

Վերը նշած հատկանիշները ցայտունորեն երևում են հատկապես անցյալ ժամանակի երկրորդական կիրառութիւն ժամանակ:

4. Ժամանակների երկրորդական կիրառութիւնը դեպքում նշված զգացմունքային հատկանիշների արտահայտութիւնը, սակայն, «արտադիր չէ՝ հատկապես այն դեպքում, երբ երկու քերականական ժամանակներ հաճախակի են հանդես գալիս միմյանց փոխարեն»:

Հայ քերականագիտական մտքի առաջնեկների՝ Դիոնիսիոս Իրականացու քերականութիւն մեկնիչների մոտ առաջին անգամ արձարծվել է քերականական ժամանակների հարցը:

Իսկովի փոխտնօրէն քննում է ժամանակների առարկայական և ոչ առարկայական բնութիւնը: Նշելով երեք հիմնական քերականական ժամանակները, նա նաև դնում է այն հարցը, թե տրոն է դրանցից կարևորը: «Ամանակ հաւաստեալ երեք,— գրում է նա,— ներկա, անցեալ և ապառնի: Ասացին ոմանք զներկայ երիցագոյն վասն անցանելոյն ընդ մա երկուցն ևս: Եւ այլք զանցեալն՝ յաղագս յառաջ անցանելոյն եւս ըստ նախադասութեան»⁴:

Անանուն մեկնիչը նույնպես նշում է երեք գլխավոր ժամանակ՝ առավել ուշադրութիւն դարձնելով անցյալ ժամանակի վրա: «Եվ անցեալն ունի շորս զանազանականս. այսինքն անցեալն շորս զանազանութիւնս ազգմանց ունի՝ զյարաձգականն, զյարակայն, զգերակատարն, զանորիշն: Եւ նշանակէ յարաձգականն զմասն ինչ ներկային, յորմէ մասն ինչ առարեալ է յիրացն եւ մասն ինչ առնելոյ կայ, յորում ասէ թէ դեռ առնէի և նշանակէ զյարաձգական, որ չէ բովանդակեալ: Իսկ յարակայն նշանակէ զերկուց ամուրց անցելոց ազդումն կամ զամսոյ միոյ, կամ զտարւոյ (ընդգծումը մերն է—Լ. Հ.), իբր թէ էգործէի: Եւ գերակատարն զքսան ամաց կամ զերեսնից որդունակ թէ էգործեցի, էկովեցի»⁵:

⁴ Адоиц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 113.

⁵ Անդ, էջ 148.

ինչպես տեսնում ենք, մեկնիչի բերած անցյալ որոշ ժամանակաձևեր արհեստական են, իսկ դրանց իմաստային յուրահատկությունների մեկնաբանման հարցում նրա բացատրությունները ոչ մի արժեք չունեն։ դրանք ժամանակաձևերի տարբերության մեջ հեռավոր և մոտ անցյալների տարբերական անհիմն փորձեր են։

Մովսես Քերթոզը բայի ժամանակներից նախապատվություն է տալիս ներկային՝ համարելով այն բայի ուղիղ ձևը։ Այս հարցում հեղինակը հարում է ատոիկներին⁶։

Թրակացու մյուս մեկնիչները (Ստ. Սյունեցի, Համամ Արևելցի, Գրիգոր Մագիստրոս) քերականական ժամանակների մեկնաբանման հարցում, նախորդների համեմատությամբ, սկզբունքորեն նոր բան չեն ասում։ Սրանց մոտ դարձյալ հիմնական խոցելի տեղը անցյալ ժամանակի մեկնությունն է։ Արտառոց է հատկապես Համամ Արևելցու մեկնությունը։ Ձարաձգական, որ յԱդամայ և ի դարս Նոյի և ի ժամանակս Փաղեկի եւ Արահամէ եւ ալսօր գործեցան փրք։ Եւ յարակայն, որ ի Մովսիսէ աւրինաւքն եւ մոտք շնորհացն, որ ի վեց դարուս, որը սկսեալ ի ծննդենէն Քրիստոսի ըստ տարետր յեղանակացն շորից անաթինութեանն կատարումն։ Իսկ անորոշին՝ երկրորդ գալուստն Քրիստոսի եւ անժուժելի արեւելման ըստ իմաստնոյն՝ ձերիք շարժի՝ երկիր եւ շորորդին ոչ կարէ հստգարտել⁷։ Բայի ժամանակներին անդրադարձել են նաև հետագա շրջանի հեղինակները։ Ծայի Նշեցին նույնպես ակնարկում է անցյալ ժամանակների զանազանությունը մասին։ Սակայն նա էլ ճիշտ չի մեկնաբանում այդ ժամանակների էությունը՝ կրկնելով Անանուանի սխալները⁸։

XVII—XVIII դարերի քերականների մոտ այս հարցի փոքրիշատե խոր քննություն չենք նկատում։ Վերջիններս նշում են երեք հիմնական ժամանակները և թվարկում ժամանակաձևերը։

Քերականական ժամանակի լմբունման մեջ մի քայլ առաջ է անցնում Ավետիքյանը՝ փորձելով բայական ժամանակը կապել առարկայական ժամանակի հետ⁹։

Հեղինակը ճիշտ կերպով բայական ժամանակը դիտում է որ-

6 Տե՛ս Գ. Զաքարյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 159։

7 Աղոց, նշվ. աշխ., էջ 262։

8 Ծայի Նշեցի, Վերլուծութիւն քերականութեան (աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի), Երևան, 1966, էջ 134։

9 Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 53։

պես լեզվի մեջ ժամանակի արտահայտության հիմնական միջոց, նա տարբերություն է տեսնում բառամաստի մեջ արտահայտված ժամանակի և բայական-քերականական ժամանակի միջև¹⁰:

Գրաբարի բայական ժամանակների կազմության, կիրառական առանձնահատկությունների, եղանակային սրատկանելիության, երկրորդական կիրառության, կերպային բնութի և այլ հարցեր ավելի գիտականորեն քննել են հետագա շրջանի ուսումնասիրողները (Բագրատունի, Ջալըխյան, Այտընյան, իսկ ավելի ուշ՝ Ստ. Մալխասյան, Մ. Աբեղյան): Քանի որ այս հեղինակների կարծիքներն ու նկատառումները, ինչպես ասացինք, վերաբերում են քերականական ժամանակների հետ առնչվող ամենաբազմազան հարցերի, ուստի մենք դրանք կնշենք համապատասխան տեղերում՝ քննարկվող հարցերին զուգընթաց: Այստեղ ասենք, միայն որ այս հարցում Բագրատունու առավելությունը նախորդներից այն է, որ նա բայական ժամանակների համակարգում տեղ է տալիս նաև բաղադրյալ ժամանակներին:

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԵՂԱՆԱԿ

Ժամանակի քերականական կարգի հետ սերտորեն կապված է եղանակի կարգը: Լեզվի մեջ ժամանակային միեւնոյն իմաստն արտահայտող տարբեր քերականական ժամանակների առկայությունը մասամբ պայմանավորված է վերջիններիս եղանակային պատկանելիությամբ: Յուրաքանչյուր քերականական ժամանակ անպայման ենթադրում է որևէ եղանակ: Այլ կերպ ասած, ամեն մի ժամանակաձև բացի ժամանակային իմաստից, արտահայտում է նաև որևէ եղանակային իմաստ:

Քերականական այս երկու կարգերի սերտ կապն ու փոխ-ազդանավորվածությունն է թերևս պատճառը, որ որոշ ուսումնասիրողներ սրանք դիտում են որպես մեկ քերականական կարգ:

Իրականում ինչքան էլ սերտ է այդ երկու հասկացությունների կապը, դրանք տարբեր քերականական կարգեր են և արտահայտում են քերականական տարբեր իմաստներ: Քերականական ժամանակը մատնանշում է գործողության կատարման ժամանակը, իսկ եղանակը՝ խոսողի վերաբերմունքը իրականության նկատ-

¹⁰ Անդ, 12 286:

մամբ (խոսողի կողմից գործողությունը կարող է ներկայացվել որպես ստույգ, անհրաժեշտ, ցանկալի, հնարավոր և այլն)։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե քերականական եղանակը ոչ առարկայական կարգ է և չի ներկայացնում լեզվի առարկական իրողությունը։

Բայց եղանակը ոչ առարկայական, անհատական կարգ չէ։ Առարկայական իրականությունը (բայական գործողության արտահայտությամբ) մեզ է ներկայանում ոչ թե խոսողի կամքով, այլ ընդհակառակը, առարկայական իրականությունից և նրա դրսևորման ձևերից է կախված, թե խոսողը ինչպես կներկայացնի իրականությունը։

Իհարկե, քերականական եղանակը դրսևորվում է բայական գործողության միջոցով, բայց վերջինս էլ, այսպես թե այնպես, հարաբերում է իրականությանը։ Իսկ այդ հարաբերությունն առարկայական է։

Եղանակի քերականական կարգը եղանակավորման արտահայտությունն է բայի դիմավոր ձևերի միջոցով։

Եղանակավորումն ունի արտահայտության իր բազմազան միջոցներն ու ձևերը։ Արտահայտության ձևերի բազմազանությունը, իր հերթին, նշանակում է, որ վերջինս չունի ձևաբանական դրսևորման իր հիմնական միջոցը։ Այդ իսկ պատճառով էլ եղանակավորումը չպետք է գիտել որպես քերականական կարգ, քանի որ վերջիններս, ինչպես իրավացիորեն նշում է Վանգրիենը, «որոշվում են միայն ու միայն ձևով, որոնց միջոցով նրանք արտահայտվում են»¹¹,

Արդի գրաբարագիտությունը գրաբարի բայական համակարգում տարբերակում է երեք եղանակ՝ սահմանական, ատորադասական և հրամայական։

Տարբեր ժամանակաշրջաններում քերականներն ընդունել են նաև այլ եղանակների գոյությունը՝ արհեստական բազմաթիվ ժամանակաձևերով։

Գրաբարի եղանակների վերաբերյալ ուշագրավ դիտողություններ ունի Միքայել Չամչյանը։ Նա նկատում է, որ միևնույն եղանակաչին ձևը կարող է ռեալիստական առարքեր փմաստային երանգներ։ Հրապարակական եղանակի մեջ, օրինակ, բացի հրամանքի արտահայտությունից տեսնում է նաև «Բանք մաղթողականք, սպառնա-

¹¹ Вандриес, Язык, М., 1937, стр. 91.

կանք, կոշականք, յորդորականք, խրատականք և արգելականք»:

Սակայն Չամչյանը իրավացիորեն յուրաքանչյուր բերականական եղանակ բնորոշում է ոչ թե երկրորդական կիրառության ձևով, այլ իր հիմնական ժամանակաձևերով: Ստորադասականի հատուկ ժամանակ է համարում, օրինակ՝ տեսնալ իցեմ (անցյալ) և տեսնիցեմ (ապառնի) ձևերը: Իցէի, իցէիւ, իցէր վերջավորությամբ ձևերը համարում է հնարովի և չի ընդունում¹², ի տարբերություն նախորդների՝ հեղինակը ըզձականը հանում է եղանակների շարքից:

Չամչյանի նման ըզձականը որպես բերականական եղանակ չի ընդունում նաև Ավետիքյանը¹³ այն պարզ պատճառով, որ վերջինս շունի իր հատուկ բերականական ձևը, Սա մի առաջընթաց բայլ էր դրարարի եղանակա-ժամանակային համակարգը ճիշտ ըմբռնելու պործում: Սակայն այս հարցում Ավետիքյանը մինչև վերջ հետևողական չէ: Այսպես, ստորադասական եղանակի համար նա նշում է երկու ժամանակ՝ ապառնի (գրիցեմ) և ներկա (ինչպես սահմանականը)¹⁴, Ստորադասական և սահմանական ներկաների տարբերությունը վաստորեն դարձյալ հանգում է եթէ-ով ու առանց եթէ-ի դործածությանը, մի բան, որը հակասում է ըզձական եղանակի քննության նրա ճիշտ սկզբունքին:

Էմինը գրաբարին բնորոշ է համարում երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և աներևույթ¹⁵: Նա առաջին ապառնին կոչում է ապառնի բաղադրյալ, իսկ երկրորդը՝ ապառնի պարզ, երկուսն էլ համարելով սահմանական եղանակի ժամանակներ: Էմինը, առհասարակ, արհեստական ժամանակաձևեր չի բերում: Գրաբարի ուսումնասիրողների մեջ նա առաջինն էր, և թերևս միակը, որ ստորադասականը որպես բերականական եղանակ չի ընդունում: Արսեն Բաղրատունու 1852 թ. լույս տեսած «Հայերէն բերականութիւն ի պէտս զարգացելոց» գրքում, ի թիվս այլ խնդիրների, մեզ հետաքրքրող հարցը նույնպես դիտական լուծում է ստացել: Եթե ըզձականը որպես բերականական եղանակ, արդեն չէին ընդունում Չամչյանը և Ավետիքյանը, ապա Բաղրատունին աներե-

12 Մ. Չամչեան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Շուշի, 1869, էջ 246: — 248:

13 Դ. Ավետիքեան, Քերականութիւն Հայկական, Վենետիկ, 1815, էջ 295:

14 Անդ, էջ 68:

15 Էմին, Քերականութիւն Հայկական լեզուի ի պէտս աշակերտաց լազանքն ճեմարանի արեւելեան լեզուաց, Մոսկով, 1846, էջ 76:

վույթը նույնպես հանեց եղանակների շարքից՝ թողնելով միայն
երեքը.

1. Սահմանական՝ որ պատմէ կամ հաստատէ պարզարար:

2. Հրամայական՝ որ հրամայէ կամ սաստէ (գնա, մի գնար):

3. Ստորադասական՝ որ ընդ պայմանաւ իմն և ի կախ ընդ
այլով թողու գրանն՝ (դի, թէ, եթէ) նայեցեմ¹⁶:

Նշված երեք եղանակները որդեգրվեցին գրաբարի հետագա
ուսումնասիրողների մեծ մասի կողմից: Իհարկե, կան նաև բացա-
ռություն կազմող ուսումնասիրություններ, որտեղ նշված են նաև
այլ եղանակներ: Այդպիսիներից է Չալըխյան—Այտընյանի նշա-
նավոր աշխատությունը, որտեղ ընդունելությունը առանձին խոս-
քի մաս է և միաժամանակ բայի եղանակներից մեկը. «Բայերուն
եղանակը հինգ է. սահմանական, հրամայական, ստորադասական,
ընդունելություն և աներևոյթ»¹⁷:

Նման մոտեցումը, իհարկե, ճիշտ չէ: Այդ կապակցությամբ
Ա. Աբրահամյանը գրում է. «Դուրս է գալիս, որ բայի հինգ եղա-
նակներից երկուսը դերբայներ են. «աներևոյթ» (անորոշ դեր-
բայ) և «ընդունելութիւն» (մնացած դերբայները): Երկուսի ոչ մի-
օրինակության պատճառով հիշյալ գրքում մի այլ տեղ դերբայնե-
րը տրված են որպես անդամ ժամանակներ»¹⁸:

Ընդունելով սահմանական, հրամայական և ստորադասական
եղանակների գոյությունը, Ստ. Մալխասյանը նշում է նաև ար-
գելականը, մեկնաբանելով այն որպես գործողության ըմբռնում
իբրև սաստ (մի բան չանել): Օրինակ՝ մի՛ սպանեք, մի՛ գողա-
նաւ¹⁹:

Իհարկե, արգելականը իր ձևով հակադրվում է գրաբարի բա-
յական մյուս ժամանակներին, բայց ելնելով միայն ձևից այն ա-
ռանձին բերականական եղանակ համարելը ճիշտ չէ: Արգելականը
չունի իր բնորոշ եղանակային իմաստը: Այն արտահայտում է հրա-

¹⁶ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 131:

¹⁷ Վրբանիսի Չալըխյան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, հանդերձ փո-
փոխմամբ և յանելուծովք, աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտընեան, 1885,
Վիեննա, էջ 9:

¹⁸ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանա-
կությունը, Երևան, 1953, էջ 31:

¹⁹ Ստ. Մալխասեանց, Գրաբարի հոլովումը եւ նախդիրները, Քիֆլիս, 1910,
էջ 45:

ման, սաստ, հետևաբար և հրամայական եղանակի արտահայտության ձևերից մեկն է՝ և ոչ թե առանձին եղանակ:

Սահմանական եղանակը ցույց է տալիս ստույգ կատարվող, կատարված կամ կատարվելիք գործողություն: Գրաբարում այս եղանակը ունի հետևյալ ժամանակները. ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար, անցյալի վաղակատար, բաղադրյալ ապառնի (զբերոց եմ). բաղադրյալ անցյալի ապառնի և երկրորդ ապառնի:

Ժամանակային երեք սլաններին վերաբերող քերականական ժամանակների առկայությամբ այս եղանակը տարբերվում է մյուս երկուսից: Վերևում նշել ենք ստորագասական եղանակի վերաբերյալ դրաբարի ուսումնասիրողների որոշ նկատառումներ: Ոմանք ստորագասական եղանակի ժամանակներ են համարում սահմանական եղանակի այս կամ այն ժամանակը՝ որոշ մակբայների հետ դործածվելիս: Այսպիսի մոտեցումը դիտական չէ, որովհետև քերականական եղանակների տարբերական սկզբունքը ենթադրում է անույալման քերականական հատուկ (եղանակա-ժամանակային) ձևերի առկայություն: Իսկ նշվածները քերականական ձևեր չեն և եղանակային հատկություն չեն կարող:

Հրամայական եղանակն արտահայտում է հրաման, հորդոր (կոչ): Շատ ուսումնասիրողներ հրամայական եղանակին վերադրում են երկու ժամանակ՝ ներկա և ապառնի: Ներկան կոչում են նաև բուն հրամայական (կարգա՝), իսկ ապառնին՝ հորդորական (կարողասի՝): Մեր կարծիքով, ոչ մի անհրաժեշտություն չկա նշված ժամանակաձևերին տալու ներկա և ապառնի անվանումներ: Քանի որ հրամայական եղանակը ինքնին ենթադրում է ապառնիություն, ապա այն ունի մեկ ժամանակ՝ ապառնի՝ արտահայտված տարբեր ժամանակաձևերով: Բուն և հորդորական հրամայական կոչվածների տարբերությունը միայն նրանց կիրառության քանակական կողմի մեջ է. առաջինն ավելի շատ է հանդես գալիս, քան երկրորդը: Կիրառական այլ առանձնահատկություններ, ըստ երևույթին, այդ ձևերը չունեն: Այդ են հավաստում նաև օրինակները. *Խնդրեա՛, այսուհետև և տես ով իցէ, որ ետ նման զսկիղըն և ով իցէ արարիչ տրարածոցս: Բայց զգուշ լիջի՛ր. զուցէ յորժամ մարզկեղեն, մտօք կամիցիս խնդրել՝ վրիպեալ դտանիցես ի ճրշմարտութենէ (Բրսղ., Ա, 5): Արի՛ք եվ ելցուք գիշերի և ապականեսցուք զհիմունս նորա (Երեմիա, Զ, 4): Այլ դու զուարթ կաց յամենայնի, նզնեաց զգործս աստարանչի գործես: զպաշտօնդ քո կա-*

տարեալ կալ... փութասըիւ գալ առ իս վաղվաղակի (Առ. Տիմեի., Դ. 5—9):

Բերված օրինակներում երկու ձևերն էլ գործածված են կողք-կողքի, առանց որևէ իմաստային կամ ոճական տարբերության:

Թվում է, հալմար չէ «հորդորական» անվանումն իսկ: Հորդորանքը յառհասարակ ավելի մեղմ է, քան հրամանը, բայց այդ նուրբ տարբերությունը նշված ձևերի կիրառության ժամանակ դարձյալ չի դիտակցվում: Այլ կերպ ասած, նրանց կիրառությունը կառված չէ «մեղմության», «ոչ մեղմության» արտահայտության հետ: Օրինակ՝ Մոդպետ քաղաքին ինդարու յղեաց առ նա ծածուկ, թէ լե՛ր ինձ կնութեան և տան քում ես բարոք առաջնորդեմ (Վկայք, 100): Քրիստոս աստուած, լե՛ր վկա, ղի ղինչ և դայ ինձ փորձութիւն համբերեմ (Վարք հրնց., 121):

Եթե հորդորականը իրոք ավելի մեղմ բնույթ ունի, ապա այս օրինակներում այն պետք է հանդես գար ընդգծված ձևերի փոխարեն, որովհետև առաջին օրինակում ամուսնության առաջարկ է, և այն բնականաբար պետք է մեղմ լինի, իսկ երկրորդում հավատացյալն է դիմում աստծուն և նրան չի կարող «հրամայել»: Իսկ քիչ վերը բերած օրինակներից էլ երևում է, որ հորդորական կոչվածն է հաճախ բուն հրաման արտահայտում:

Ուրեմն զրեա՛ և զրեսըի՛ր ձևերը իմաստային համարժեքներ են, և հրամայական եղանակի մեջ դրանք չպետք է առանձնացնել որսին տարբեր ժամանակներ: Դրանք արգելական ձևի հետ միատին (մի՛ զրեր) հրամայական եղանակի ապառնի ժամանակի արտահայտության ձևերն են:

Կերող եվ ժԱՄԱՆԱԿ

Կերպի քերականական կարգը, ինչպես իրավացիորեն նշում է Կուրիլովիչը, համընդհանուր կանոնադրիա է. այսպես թե այնպես այն գոյություն ունի աշխարհի բոլոր լեզուներում²⁰:

Կերպի տարածված ըմբռումներից մեկը կատարյալության և անկատարության հակադրությունն է (совершенство—несовершенство), որը ավելի բնորոշ է սլավոնական լեզուներին: Սա ուսերենի քերականության մեջ ընդունված ВХД-ն է, որը միջազգային տերմինաբանությամբ կոչվում է aspect:

²⁰ E. Kurylowicz, L'apophonie en indoeuropéen, Wrocław, 1956, p. 25.

Հարկ է նշել, որ ռուսերենի կերպը չի համապատասխանում ոչ սլավոնական լեզուների, այդ թվում և գրաբարի կերպին: Վերջիններում անկատարություն—կատարյալություն հակադրությունը կապված է ներկայի և անցյալ կատարյալի հետ, իսկ ռուսերենում թե՛ ներկա, թե՛ անցյալ ժամանակի հիմքերից կազմված ձևերում կարող է հանգես գալ նշված կերպը, որի ձևաբանական արտահայտիչները հիմնականում որոշ նախամասնիկներ ու վերջամասնիկներ են:

Կերպային այս առանձնահատկությունը սլավոնական լեզուների նորամուծությունն է, որովհետև այն գոյություն չունի նաև անդլոլուսական հիմք լեզվում:

Հայերենում (ինչպես նաև հնդեվրոպական՝ ոչ սլավոնական շատ լեզուներում) կերպային հակադրությունը իրականանում է միևնույն բայի տարբեր ձևերի հակադրությամբ, իսկ ռուսերենում՝ տարբեր բառերի հակադրությամբ միջոցով, որովհետև բայական դույզների կերպային հակադրություն առաջացնող ռուսերենի նախածանցներն ու վերջածանցները ոչ թե ձևակազմական, այլ բառակազմական երևույթներ են:

Լեզվաբաններից ոմանք կերպի բերականական կարգի մեջ տեսնում են գործողության իրականացման հետ կապվող այլ հատկանիշներ (տեականություն—ոչ տեականություն, անընդհատություն—ընդհատություն, սկսողականություն—ավարտունություն և այլն):

Կերպի այս հասկացության համար ընդունված տերմին գոյություն չունի, սովորաբար օգտագործում են գերմաներեն *Aktionssart* բառը, կամ այս բառի թարգմանությունը այս կամ այն լեզվով:

Ոմանք անջրպետում են այսպես կոչված aspect-ը այս վերջին հատկանիշներից՝ ոչ մի կասկ չգտնելով դրանց միջև և համարելով դրանց սկզբունքորեն հակառակ երևույթներ: Իրականում սրանք ոչ թե հակադրվում են իրար, այլ լրացնում և երբեմն էլ մեկը սլայմանավորում է մյուսին:

Ինչպես կատարյալություն—անկատարությունը, այնպես էլ մյուս հատկանիշները բերականական համարժեք հատկանիշներ են, որոնք ցույց են տալիս գործողության իրականացման ժամանակային վիճակներ: Լեզու երկու խումբ հստակափոխների ոչ թե հակադրության, այլ միասնության մեջ կարելի է բնեկ կերպի և կեր-

սյա-ժամանակային փոխանցումների հարցը դասական գրաբարում (նկատի ունենք քերականական ժամանակը)։

Կերպի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ հաջողված է համարվում Մ. Աբեղյանի բնորոշումը։ Իր «Աշխարհաբարի շարահյուսություն» մեջ (Վաղարշապատ, 1912, էջ 225) նա գրում է. «Բայի ժամանակներից անբաժան են բայի կերպերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ»։

Աբեղյանը ընդունում է չորս կերպ՝ կատարվող (դնում է, գնում էր), կատարված (գնացել է, գնացել էր), կատարելի (գնալու է, գնալու էր) և պարզ կերպ (գնացի, վաճառեմ)։

Հիմնականում ճիշտ տալով կերպի սահմանումը և նշելով նրա սերտ կապը բայի ժամանակների հետ, Աբեղյանը, սակայն, հարցը ինչ-որ տեղ թողնում է թերի՝ կերպերը փաստորեն նույնացնելով բայական ժամանակների հետ։ Մյուս կողմից, ըստ հեղինակի սահմանման, եթե իրոք կատարվող, կատարված և կատարելի կերպերը ցույց են տալիս գործողության հատկություն մի որևէ ժամանակակետի նկատմամբ, ապա պարզ կերպ անվանումը նման հատկություն չի նշում (թեև իմաստային տեսակետից այն նույնպես մատնանշում է կատարված գործողություն)։

Սխալ պետք է համարել այն տեսակետը, ըստ որի կերպի արտահայտությունը անպայման կապում են դերբայի, իսկ ժամանակի արտահայտությունը՝ օժանդակ բայի հետ։ Աբեղյանը, նրա հետևություններն առնուհետև, որոշ լեզվաբաններ, բայերի պարզ ժամանակները համարում են անկերպ։ Նպատակ չունենալով անդրադառնալ արդի գրական լեզվում պարզ ժամանակների կերպային հատկանիշների հարցին, նշենք, որ գրաբարում նման բայերի մեջ առկա է կերպը, և մենք ուշադրություն կդարձնենք գրաբարի պարզ ժամանակների կերպային դրսևորմանը։

ԿԵՐՊԻ ԿԱՐԳԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրաբարի քերականները առհասարակ կերպի քերականական կարգին չեն անդրադառնում։ Ոմանք թեթևակիորեն նշում են միայն կերպային որոշ հատկանիշներ, կապված բայի անցյալ անկատար կամ անցյալ կատարյալ ժամանակների հետ, իհարկե, առանց խորանալու հարցի չնայած մեջ։ Դասական գրաբարում համեմա-

տարար տկնառու արտահայտվում է անկատարություն—կատարյալություն կերպային հակադրությունը՝ ներկա և անցյալ կատարյալի հիմքերի վրա: Որպես անկատարության ձևաբանական արտահայտիչ հանդես է գալիս ներկայի հիմքը, իսկ կատարյալության համար՝ անցյալ կատարյալի հիմքը: Այդ հակադրությունը երևում է հատկապես համապատասխանաբար՝ ներկա, անցյալ անկատար, մի կողմից, և անցյալ կատարյալ ժամանակներում:

Արդեն դասական շրջանից մթագնված են կերպի դրսևորման ձևաբանական միջոցները, և դա պատճառ է հանդիսացել այն հանդամանքին, որ դրաբարի քերականները չեն նշել կերպի կարգի գոյության մասին: Գրաբարում կերպի արտահայտիչ պետք է ընդունել բայի ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը՝ առաջինը որպես անկատարություն մատնանշող, իսկ երկրորդը՝ կատարյալություն: Հետևաբար սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ստորադասական եղանակի ապառնի ու հրամայական եղանակի արգելական ձևերը ենթադրում են անկատարություն, իսկ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, հրամայական եղանակի ներկա (բուն հրամայական) և ապառնին (հորդորական հրամայականը)՝ կատարյալություն: Քանի որ ապառնի ժամանակը ինքնին կատարելի դործողություն է, ապա այս, ինչպես նաև հրամայական եղանակի ժամանակների դեպքում վերոհիշյալ կերպերը բնականաբար դիտվում են կատարելի դործողության մեջ:

Եթե ավելի խորամուխ լինենք, ապա կարելի է նկատել, որ բոլոր ներկայի և անցյալ կատարյալի հիմքերի՝ անկատարությունը և կատարյալությունը արտահայտվում են հետևյալ հակադրությամբ:

Անցումն էլ, արկանել տիպի բայերի համար հակադրությունը կոնկրետանում է աճ/օ, աղալ, սիրել տիպի համար՝ օ/ց, երկնչիմ, կոճնչիմ խմբում՝ նչ/ի, թոչիմ, փախչիմ բայերի համար՝ չ/ի և այտնուլ, զարթնուլ խմբի համար՝ ն/ի հերթագայությամբ: Վերջին երեք տիպերը այսպես կոչված ի թույլ բաղադրիչով բայեր են:

Բառնալ, դառնալ բայերի համար հերթագայությունը ն/ծ-ն է, իսկ սրանց վերականգնված ձևերի դեպքում՝ բարձնալ, դարձնալ, կլինի ն/օ: Ռ/ւ-ն հակադրության մեջ չենք մտցնում որպես հնչյունի փափկացում և կոշտացում, ինչպես նաև կերպային ցուցիչ չենք հաշվում երկրորդ ապառնու ս-ն (սիրեսցուք, հեռասցուք),

որովհետև այն անցյալ կատարյալի ց-ն է, որը տարնամանության օրենքով դարձել է ս:

Ինչպես հայտնի է, ու խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքը հիմնականում ունցոյական է: Այս խմբի ածանցավոր բայերի համար հակադրությունը կաղում է ածանց/զրո հերթադայությունը: Օրինակ՝ զրոսնուլ—զրոս՝ ն/օ, օնունուլ—օնո՝ ն/օ և այլն: Ընկենուլ, ընթնունուլ, լնուլ, խնուլ, յենուլ բայերի համար՝ ն/ց, կամ՝ են/ց:

Հարցը մի քիչ դժվարանում է, երբ դիտում ենք այս խոնարհման պարզ բայերը՝ գնուլ, թողուլ, զենուլ և այլն: Այս խմբին կարող ենք միացնել և խոնարհման այն բայերը, որոնց անցյալ կատարյալի հիմքը արմատական է: Դրանք են՝ ածեմ, բերեմ, հսունեմ, հեղուսեմ: Որոշնք են այս բայերի հերթադայովող անդամները: Եթե դրանք համարենք համապատասխան ներկայի և անցյալ կատարյալի վերջավորությունները, ապա խախտած կլինենք ընդհանուր սկզբունքը, էլ չենք խոսում այդ մասեցման դիտական լինելու մասին: Եթե հաշվի առնենք խմաստային կողմը (խոսքը միայն անկատարություն—կատարյալության մասին է), ապա այստեղ դարձյալ սկզբունքի խախտում թույլ կտանք՝ մի մակարդակից անցնելով մյուս մակարդակին:

Նայենք այս խմբի որևէ բայի խոնարհման հարացույցը, ներկա և անցյալ կատարյալ ժամանակների համար, եղակի թվում.

Ռերեմ

ներկա

բերեմ

բերես

բերէ

անցյալ կատարյալ

բերի

բերեր

բեր (բերեր)

Նշված այս և նման բայերի կերպային հակադրությունը ավելի կոնկրետ է դառնում 3-րդ դեմքում՝ օ/ն հերթադայությամբ (կամ օ/է՝ ձայնավորով սկսվող բայերի դեպքում):

Մենք է քննել բայերի մի խումբ՝ այսպես կոչված անկանոն բայերը: Անկանոնությունը արտահայտվում է բայերի տարահիմքությամբ: Այդ տարահիմք (երբեմն նաև տարարմատ) հակադրությամբ էլ արտահայտվում է կերպային հակադրությունը: Լսեմ—լուայ, դեմ—եդի, գամ—եկի, ուտեմ—կերայ և այլն:

Ներկայի և կատարյալի հիմքերից կաղմված ժամանակա-
ձևերում հանդես է գալիս նաև տեական և ոչ տեական կերպով:

Բայի հարցերով ղեկավարող շատ լեզվաբաններ (Գ. Ղափանց-
յան, Ա. Արուստամյան, Ա. Ղարիբյան, Հ. Բարսեղյան և այլք) են-
թադրում են, որ դրաբարում տեականության ձևաբանական ար-
տահայտիչ է եղել ան/են ածանցը: Ինքնին այդ հանդամանքի օդ-
տին է խոսում այն փաստը, որ ան-ը հանդես է գալիս միայն ներ-
կայի հիմքից կաղմված ժամանակաձևերում (տեսանեմ, տեսանէի,
տեսանիցեմ): Բացի դրանից, գրաբարում մի շարք ածանցավոր
բայերի կողքին (ցանկանամ, անձկանամ, զատանեմ, սպանանեմ)
գործածվում են նաև այդ բայերի ոչ ածանցավոր ձևերը: Ենթադր-
վում է, որ բայերի այդպիսի դուգահեռ գործածությունը աննպա-
տակ չէր կարող լինել: Ամենայն հավանականությամբ տեականու-
թյունը ավելի ընդգծված ձևով հանդես է եկել ածանցավոր ձևերի
մեջ:

Արդյո՞ք դասական մատենագրությունը ածանցավոր և ոչ ա-
ծանցավոր ձևերի մեջ տարբերակում է կերպային իմաստներ:

Ճիշտ է, մենք հանդիսվում ենք և՛ այս, և՛ այն ձևերին, բայց
թվում է, թե դասական շրջանից արդեն հեղինակը կամ թարգմա-
նիչը չի դիտել դրանք որպես կերպային տարբերակներ, այլ օգտու-
ղործել է որպես համարժեք ձևեր:

Հաճախ կարելի է հանդիպել հենց միևնույն նախադասության
մեջ հանգես եկող երկու ձևերին էլ, ինչպես՝ Առեալ զանձնիշխանու-
թիւնն ում կամի ծառայանայ, որ մեծ շնորհն պարգեւեալ է նման
Աստուծոյ. քանզի այրն ամենայն ի հարկէ ծառայէ աստուածա-
կան հրամանին (Եղն., 40): Անձն ամպարչտի ցանկանայ շարեաց
և ոչ դտցէ (Առակք, ԻԱ, 10): Ամպարիշտ ցանկայ զամենայն ա-
ւուրս ղցանկութիւն շարեաց (նույն տեղում): Նման օրինակները
շատ են, սակայն դրանցում չի ղգացվում, որ տեականություն ար-
տահայտելու համար հեղինակն օգտագործել է ածանցավոր ձևը:
Ուստի կարելի է եզրակացնել, որ դասական շրջանից արդեն ան-ը
դադարել էր կերպային արժեք ունենալուց, որը ամենայն հավա-
նականությամբ գործուն է եղել ավելի վաղ շրջանում:

Տեսական-շարունակական կերպի իմաստը արտահայտվում է
նաև բառային միջոցներով: Օրինակ՝ Վաղ հասիր, ղեռ զամուսինն
իմ դուր և առանց վնասու և հանցանաց խողխողեն (Բուդ., 284):
Ահադարեա՛ւ և՛կ, դի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն,

իբրև բազմեցան և դեռ ուտէին (Չալըխ., 367): Դեռ իմն զգործ մշակութեան աստուծոյ գործէր (Բուդ., 49): Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց (անդ, 76):

Այստեղ դեռ, տակաւին բառերը արտահայտում են գործողութեան տեղանկութիւնը, նրա շարունակական բնույթը:

Տեղանկութեանը երբեմն արտահայտվում է նաև կամ բայի միջոցով: Այս դեպքում բայը գրվում է անցյալ անկատարով՝ հարակցեցնելով անցյալ դերբային (վերջինս մատնանշում է գործողութիւնը): Օրինակ՝ Մինչդեռ կայր նա՝ կախեալ: Եւ կայր նա կախեալ աւուրս եւթն (Ագաթ.):

Տեղանկութեան արտահայտման այս ձևը կարելի է համարել քերականական միջոց, որովհետև այս բառերը ինքնին զուրկ են բառային իմաստից և տվյալ դեպքում ունեն միայն քերականական իմաստ՝ ի հակադրութուն կերպի այն արտահայտութեան, երբ դա դրսևորվում է բառային իմաստի մեջ: Օրինակ՝ Կամ զշուր, որ հանապազ ըմպեմք: Եզնիկից քաղված այս նախադասութեան մեջ տեղանկութեան արտահայտվում է հաճապազ բառի միջոցով, բայց այդ հենց իր լուսաբն իմաստն է: Ուստի կերպի այս արտահայտութիւնը տարբերվում է նախորդից, թեև այն նույնպես ենթադրում է տեղանկութիւն:

Բայական տրոշ զուրգերի մոտ կարելի է տեսնել ընդհատութիւն—անընդհատութիւն կերպային դրսևորումները: Այդ երկու կերպերի հակադրութիւնը կոնկրետանում է ատ (կամ ոտ, տ)/օ հերթադարձութեամբ:

Օրինակ՝ ատ/օ՝ Սկսավ տէր խոցոտել զիս, բայց ի սպառ մի սպանցէ զիս (Յոր., 2, 9): Են որ քանիւք իւրեանց խոցեն որպէս սրով (Առակք, ԺԲ, 18): Տ/օ կամ տ/ան՝ Մինչեւ քարձցէ զբազմութիւն թշնամանողաց և զգաւազանս անիրաւաց բեկտեսցէ (Սիրաք, 2Բ, 23): Բեկէ զյամօքատրսն ի չար ընթացս: Ոմն պահէ խոնարհացուցեալ զպարանոցն իբրև և անուր և բեկանել զհաց աղքատին ոչ կամի (ՆՁԲ):

Դասական շրջանում ընդհատութիւնը ավելի հաճախ արտահայտվում է բառային միջոցներով՝ կապված բառիմաստի հետ: Բոլոր միջոցները նշելը այստեղ աննպատակ է: Նշենք միայն, որ ամենատարածված եղանակը մակբայների կրկնութիւնն է: Ինչպես՝ Զիարդ պաշտիցեմ զարեգակն, որ մերթ կռի իբրև զծառայ առ ի սպասն յոր կարգեցաւ հասանելոյ և մերթ երթայ զօղէ իբրև զարհուրեալ և տայ տեղի խաւարին ընու զմիջոց ի մեծի տանս:

(հղն., 11)։ Կամ զօդ որ մերթ զմերթ վարագացեալ հրամանաւ և մերթ սարսէ ի զոչելոյն սաստիւ (անդ, 15)։

Կսին լեզուներ, որոնք ունեն ախպես կոչված ինգրեսիվ կամ սկսողական կերպ։ Ռուսերենում նշված կերպն ունի իր ձևաբանական ցուցիչը։ Ուշադրով է այն փաստը, որ այդ միջոցը շունեցող այլ լեզուներ ռուսերենի նշված կերպը ներկայացնում են բառային անապարհով։ Ախպես՝ Մ. Շոլոխովի «Խաղաղ Դոն»-ից К вечеру поосналась изморозь նախադասությունը, որտեղ ընդգծված բայը սկսողական կերպ է արտահայտում, ֆրանսերեն թարգմանության մեջ արտահայտվել է հետևյալ ձևով՝ Vers le soir une bruin froid semit a tomber²¹։

По-նախածանցով արտահայտված սկսողական կերպը ֆրանսերենում արտահայտվել է semit բառով, որը համապատասխանում է արդի հայ դրական լեզվի սկսեց (դրաբ. սկսաւ) բառին։ Ի՞նչ համեմատելու լինենք դրաբարը (ինչպես նաև աշխարհաբարը) ուրիշ լեզուների հետ, որոնք ունեն սկսողականության կերպի ձևաբանական արտահայտիչ, ապա կարելի է բառային անապարհով ներկայացնել այդ կերպը, իսկ երբ քննում ենք դրաբարն «ինքն իր մեջ», տեսնում ենք, որ սկսողական կերպը բնորոշ չէ դրաբարին, կամ, ավելի ճիշտ, այն շունի իր ձևաբանական արտահայտությունը²²։

Այսպիսով, դասական դրաբարը տարբերակում է հիմնականում անկատարություն—կատարյալություն, տեղականություն—շտեղականություն, մասամբ նաև՝ ընդհատություն—անընդհատություն կերպային գրանցումները։

Սրանք սերտորեն կապված են քերականական ժամանակների հետ։

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսմանական եղանակի ներկա ժամանակի հետ կապվում է այնպիսի գործողություն, որը կատարվում կամ ժխտվում է խոսքի պահին։

21 Вьюгова Т. Б. Способы передачи значения совершенного вида русских глаголов средствами французского языка, Тула, 1968.

22 Սկսողականությունը հակադրվում է ավարտունությանը, որը ենթադրում է անցյալ կատարյալ ժամանակ։ Այդ ժամանակի համար սկսայնությունը ետին սլան է մղվում։

Նշենք, որ խոսքի պահին կատարվող գործողության մատնանշումը թեև ներկա ժամանակի հիմնական, սակայն միակ հատկանիշը չէ:

Ժամանակակից ռուսերենի քերականության մեջ տարբերակված է ներկա ժամանակի երկու իմաստ. ա) «բուն ներկա», որը ցույց է տալիս խոսքի պահին կատարվող գործողություն, ինչպես՝ — Ի՞նչ ես անում: — Կարդում եմ: բ) «Ռչ բուն ներկա», որը չի բացառում ներկան, այսինքն՝ նրա մատնանշած գործողությունը ոչ անցյալ է և ոչ էլ ապագայում կատարվելիք, բայց ճշտորեն չի կապվում խոսքի պահի հետ²³:

Բուն և ոչ բուն ներկաները միայն խոսքի պահի հետ ունեցած հարաբերությամբ չեն տարբերակվում: Ռչ բուն ներկայի դեպքում էլ երբեմն ենթադրվում է գործողության համընկնում խոսքի պահի հետ: Այսպես՝ Աբել ծագում է արևելից նախադասության մեջ, թեև գործ ունենք մշտապես գործողության, հետևաբար ոչ բուն ներկայի հետ, սակայն այդ գործողությունն էլ ներառում է (կամ թերևս կարող է ներառել) խոսքի պահը: Նշված ներկաների տարբերակման հիմքում պետք է տեղնել նաև նրանց մատնանշած գործողության տեղանքությունը: Բուն ներկան ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը սկսվել է խոսքի պահին ու շարունակվում է, իսկ ոչ բուն ներկայի դեպքում գործողությունը սկսվել է ինչ-որ անցյալ անորոշ ժամանակակետում և շարունակվում է, ներառելով խոսքի պահը:

Նկատված է առհասարակ, որ քուն ներկան օգտագործվում է հիմնականում խոսակցական լեզվում, մենախոսությունների, երկխոսությունների մեջ, գրաբարում՝ հատկապես առերես խոսակցության ժամանակ: Օրինակ՝ Ահա ախիկ ես հասա քեզ գուրտն (Ծննդ., Թ, 9): Եւ ասեմք եղիցի դաշն ընդ միմեանս (Ծննդ., ԻԶ, 28): Ընդէր ոչ առնեա զկամս իմոյ (Ագաթ., 50): Ասէ տէր ցաստանայ. դու ուստի՞ գաս (Ցոր., Ա, 7): Նոքա ասեն՝ թէ որոց վկայից ասեռ: Եւ նա ասէ (Ագաթ., 170): Լուր, որդեակ և ընկալ զբանս իմ, զճանապարհս փմաստութեան ուսուցանեմ քեզ. խելամուտ առնեմ զքեզ ուղիղ շաղպաց (Առակք, Դ, 12):

Հաճախ բուն ներկան տեղեկացվում է այս կամ այն մակրայով, որը ավելի է կոնկրետացնում գործողության կատարման ժամա-

²³ Грамматика современного русского литературного языка. Москва, 1970, стр. 59.

նակր: Օրինակ՝ Ահա մտանեմ զնա քեզ, բայց միայն զոգի նորա պահեսցես (Յոր., Բ, 6): Ահա արկանես ինձ բաղմականս առ հօրն հաւատոյ Արրահամու (Աղաթ., 53): Յայսմանէ զոր այժմս տեսանեմ (Բրսզ., Ե, 37): Ահաւասիկ տեսանեմ զբնութիւնսն միմեանց նականակս (Եզն., 33): Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգւոյ իմոյ զպատգամս (Առակք, 23):

Այս բառերը կարծես ընդգծում են զործողութեան կարճատևութիւնն ու կապը խոսքի պահի հետ: Հականակ սրանց, որոշ մակրայնէր շեշտում են զործողութեան տևական բնութիւնը. ինչպես՝ Կամ զերկիր, որ հաճապաւ իրեմէ և ցանկ կոխեմէ և զաղբ զմեր և զանասնոց մերոց ի նա հեղում (Եզն., 16): Կամ զջուր, որ հաճապաւ լւնում (անդ, 16): Դոհանամ զԱստուծոյ յամենայն ժամ (Առ. Կորնթ., Ա, 4):

Դասական զրաբարում ներկա ժամանակի մյուս տարածված զործածութիւնն այն է, երբ այդ ժամանակով դրված բայը վկայակոչում է որեւէ մեկին կամ որեւէ մի բան, ընդ որում, բայի արտահայտած զործողութիւնը չի համընկնում խոսքի պահին: Նման կիրառութեամբ հանդես են գալիս հատկապես ասացական բայերը. ինչպես՝ Վկայէ Դավիթ թէ ամենայն աստուածք հեթանոսաց զեր են (Եզն., 157): Երանելի Պաւլոս ասէ, թէ զինչ հաղորդութիւն կայ Քրիստոսի ընդ Բելիարայ (անդ, 15):

Նման պաշտոն են կատարում նաև պատմեմ, կոչեմ, անուանեմ բայերը: Օրինակ՝ Որոց աղնուականութիւնքն յամենայն աստուածածանօթ զրոց պատմի (Կոր., 26): Տես զինչ պատմէ մեզ Միքայն շնորհն հոգւոյն մարդարեութեան (Աղաթ., 288): Եւ կոչեն զիրք անուն հաստատութեան (Բրսզ., Գ, 56): Գիրք որոմն ի մէջ ցորենոյ անուանեն (անդ, Ե, 91):

Այսպիսի ներկաները իրենց իմաստով մոտենում են պատմական ներկային, մյուս կողմից էլ սրանց մատնանշած զործողութիւնները դիտվում են իրրեւ մշտատեւ, իսկ, ինչպես դիտենք, իրականութեան այնպիսի երևոյթներ, որոնք անփոփոխ են և կատարվում են մշտապես, հիմնականում արտահայտվում են ներկա ժամանակով: Օրինակ՝ Զիարդ պաշտեցեմք զարեղակն, որ մերթ երթայ զօղէ իրրեւ զարհուրեալ... (Եզն., 15): Եւ այլ ևս անշափ և անհամար զետք ելանեն ի կողմանս Հիւսիսոյ և դան մտանեն լեւսիլնոս ծով, որ է սահմանս Պոնտոս աշխարհին (Բրսզ., Գ, 55): Մագէ արեղակն և մտանէ արեղակն (Ժող., Ա, 60):

Ներկա ժամանակի նշված գործածությունը բնորոշ է շատ լեզուների: Որոշ ուսումնասիրողներ Աբելը ծագում է արևելից տիպի դատողություններին ավելի հարմար են համարում ներկա ժամանակը, այն պատճառով, որ «ներկան ինքնին ամենաանորոշ ժամանակն է», ուրիշներն էլ այդպիսի նախադասություններն անվանում են «անժամանակյա»:

Մեր կարծիքով, նման դատողությունները հիմնավոր չեն: Նախ, ճիշտ չէ ներկան դիտել իբրև «անորոշ ժամանակ», մյուս կողմից էլ, ինչպես առարկայական իրականության, այնպես էլ լեզվի մեջ «անժամանակյա» գործողություններ չեն կարող լինել: Թերևս իրավացի է Նսպերսենը, որ գրում է. «Եթե այդպիսի դատողություններում սովորաբար օգտագործվում է ներկայի ժամանակաձև, ապա դա արվում է այն պատճառով, որպեսզի ցույց տրվի, որ նրանք իրական են նաև ներկա ժամանակի համար»²⁴:

Շեշտը դնելով ներկա ժամանակի վրա, խոսողը կարծես հավաստում է նաև գործողությունների մշտատևությունն ու անփոփոխելիությունը:

Ներկա ժամանակով են արտահայտվում նաև այնպիսի ձևակերպումները, որոնք սահմանումների փուլերն են: Այսպես՝ Նյայտ է թէ որ ինչ ի մէջ երկուց գլխաւորացս գտանի, ընդ նոսին իբրև զնոսա արարեալ հաստատեալ գտանի և նոքօք սահմանի (Բրսղ., Ա, 14): Եթէ գտանի ինչ թեթև ի մի վայրս վայրացն զոր ունի երկիր ի վեր հայի շարժիլ և վերանալ և ինչ որ ծանր է ի խոնարհ հայի ի ձգել իջանել (անդ., 19): Ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ ելանէ (Եղն., 99): Զի որ է ոք կամ արարիչ է կամ արարած (անդ., 126):

Հիմնականում ներկա ժամանակով են դրվում նաև ենթակայական դերբային փոխարինող բայի դիմադրող ձևերը: Օրինակ՝ Որ շարժին և փոփոխի չէ էական (Եղն., 11): Որ հատանէ զսկիզբն և երկուս առնէ և ոչ մի, այս ինքն բազումս և անբաւս և որ ինչ զհատուածն ընդունի մարթի դարձեալ զի և նա հատանիցի (Բրսղ., Ա, 12): Որ շատ խօսի ապաքէն ըստ նմին և լսիցէ (Յոր., ԺԱ, 2): Որ զործէ ղերկիր իւր՝ յագեացի հացիւ (Առակ, ԺԲ, 11):

Ներկա ժամանակով են արտահայտվում նաև այնպիսի գործողություններ, որոնք պարբերաբար կրկնվում են: Բազում ան-

²⁴ О. Есперсен, Философия грамматики, Москва, 1959, стр. 303.

զամ աղնիվ ցորեան սեւմանեմք և դայ, բերէ այլ կերպարանս շըր-
ջեալ (Բրսղ., 90): Ի ժամանակս ձմեռայնոյ ի հարաւակողս կոյս
փոխլ, զնացս արեղական և յետ սակաւ ինչ ժամանակաց ի հասա-
րակած աուրնջեան և զիշերոյ սիծէ դիպեցուցանէ (անդ, 59):

Նման աիսի ներկան ընդունված է անվանել կրկնվող գործո-
ղության ներկա:

Ներկա ժամանակով են արտահայտվում առածները, թեւովոր
խոսքերը, խրատները (առածական ներկա): Մեզ ավանդված դրա-
րարը, անշուշտ, ավելի մշակված ու ինչ-ինչ չափով նորմավորված
է (որպէս դրական լեզու) և որոշ կողմերով անշուշտ տարբեր-
վում է խոսակցական, առօրյա լեզվից: Բայց դրաբարն էլ զուրկ
չէ առածներից, թեւովոր խոսքերից: Բերենք օրինակներ՝ Միտք
դրանս ԲՆԵՆ և քիմք զկերակուրս նաշակեն (Յոր., ԺԲ, 11): Յոր
վայր մտանեն թշնամանք, անդ են անարդանք (Առակք, ԺԱ, 2):
Որ սիրէ զխրատ սիրէ զիմաստութիւն (անդ, ԺԲ, 1): Լեզու իմաստ-
նոց զիտէ զբարիս, բերան անզգամաց պատմեն զշարիս (անդ, ԺԵ,
2): Մառայ որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա
(Եղն., 61): Ի ժառոյ անտի պտուղն իւր նաւաչի (անդ, 121):

Դասական դրաբարում ներկա ժամանակով մի ուրույն գործա-
ծողութուն ունի ասեմ բայը: Վստահորեն կարելի է ասել, որ դա-
սական շրջանի բոլոր գործերում ասեմ-ը ամենից շատ ներկայի
ժամանակաձևով է հանդես գալիս (շեշտում ենք՝ ժամանակաձև և
ոչ թե ժամանակ, որովհետև այդ ժամանակաձևով հաճախ արտա-
հայտվում են տարրեր ժամանակային իմաստներ):

Անկախ նախադասության (խոսքի) ընդհանուր ժամանակա-
յին ֆոնից, այն ավելի հաճախ գրվում է ներկա ժամանակով:

Այդ է վկայում նաև համեմատությունը հունարենի հետ: Այս-
տեղ համապատասխան բայը կարող է արտահայտված լինել ինչ-
պէս դերբայական, այնպէս էլ դիմավոր ձևերով (տարբեր քերա-
կանական ժամանակներով): Հայ թարգմանիչը, սակայն, դրանք
անխտիր դնում է ներկա ժամանակով: Օրինակ՝ Յայնժամ կատա-
րեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիա մարգարեի, որ ասէ (Մտթ., Բ,
17): Հուն.՝ Ὅτε ἐπελάληεν τὸ γένειν τοῦ ἱερεμίου τοῦ προφήτου λέγοντος
(դրբ.), Եւ տեսեալ զբաղումս ի սաղուկեցոցն եւ ի փարիսեցոց
եկեալս ի մկրտութիւն նորա՝ ասէ ցնոսա (անդ, Գ, 7): Հուն.՝
Σύπεν αὐτοῖς (աորիստ): Եւ եկեալ առ նա, ասէ (Ղակ., Ա, 28):
Հուն. Κεὶ εἰσελθὼν πρὸς αὐτοὺς εἶπεν (աորիստ):

Գրաբարում ներկա ժամանակը հանդես է գալիս նաև երկրորդական կիրառությամբ՝ արտահայտելով որևէ այլ քերականական ժամանակի իմաստ։

ա) Ներկան իբրև անցյալ

Սա, այսպես կոչված, պատմական ներկան է։ Ամեն առիթով և ամեն բնույթի գործերում հնարավոր չէ պատմական ներկա գործածել։ Լեզվա-ոճական այս միջոցը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։

Պատմական ներկան հանդես է գալիս հիմնականում պատմողական-սլատմական բնույթի գործերում, երբ հեղինակը պատմությանը ավելի ճկուն ու կենդանի ոճ տալու նպատակով դեպքերը շարադրում է (պատմում է) ներկա ժամանակով։ Նման դեպքում հեղինակը, կարծես թե, հանդես է գալիս ոչ միայն պատմողի, այլ նաև ականատեսի դերում, չնայած իրականում պատմվող դեպքերը վաղուց են կատարվել։

Այստեղից էլ բխում է մի նոր հետևություն. պատմական ներկան անպայման ենթադրում է որոշակի ժամանակահատվածի առկայություն՝ գործողությունը առարկայորեն տեղի ունենալու ժամանակից մինչև հեղինակի կողմից այդ գործողությունները նկարագրելու պահը։

Ուսումնասիրողներից շատերը պատմական ներկան բնորոշ են համարում ժողովրդական-խոսակցական լեզվին։ Ըսպերսենը այդ կապակցությամբ գրում է. «Պատմական ներկան (հեղինակի տեղումինքնաբանությամբ՝ դրամատիկական ներկա) բնորոշ է աչքի-սի առօրյա արտահայտություններին, որոնք համեմատաբար ավելի ուշ են երևացել գրավոր խոսքում, որովհետև գրական լեզվի համար նրանք անարժան էին համարվում։ Դրամատիկական ներկա Հոմերոսը չի գործածում, բայց այն հաճախ օգտագործում էր Հերոդոտը։ Դեյլըյոզը իհարկե ճիշտ է, — շարունակում է Ըսպերսենը, — պնդելով, որ այն «անկասկած հին ու ժողովրդական է»²⁵։

Պատմական ներկայի հանդիպում ենք նաև դասական գրաբարում։ Ինչպես՝ ...ն. տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Հայր կոչէր և յաւագաց զումարեմ ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն և առնեն ընդ նոսա այլ տասն նախա-

²⁵ О. Есперсен, *նշվ. աշխ.*, էջ 301—302։

ռարս և յուղարկեցին զնա մեծաշուք պատուով... Անդ անոնադրեն շՇաճակն ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց և պատուով դառնան առ թաղաւորն (Բուդ., 3, Ժէ, 70): Ասլս թաղաւորն սլարսից, քանդի դայս լուեալ ի քաղէիցն, տաճիկ ուղտուք աւնակէ ի Հայս արս զոդոյ և զջրոյ (անդ, 4, Դ, 252):

Պետք է ասել, սակայն, որ դասական գրաբարում ներկայի այդ կիրառությունը այնքան էլ տարածված չէ: Այդ գործառնություններ ավելի հաճախ կատարում է անցյալ անկատար ժամանակը: Այստեղ մենք նման օրինակներ չենք բերի, որովհետև գրաբարի անցյալ ժամանակների յուրահատկություններին կանգրադառնանք համապատասխան տեղում:

Գրաբարում անցյալի գործողությունները համեմատաբար ավելի հաճախ են արտահայտվում ներկա ժամանակով, երբ, թեպետ գործողությունը կատարվել է վաղուց, բայց նրա արդյունքը հարատևում է մինչև հեղինակի խոսելու պահը: Օրինակ՝ Հանդոյն նմա նշանակէ և Պետրոս ի կաթողիկեական թղթին իւրում (Ագաթ., ՂԾ, 519): Արդ նախ դաստուածն օրինակ և դհիւղն նմա հաւասար դնել ի փիլիսոփայից դողացեալ ղնէ (Ծղն., 251): Հանդոյն սմին և Ղուկաս յսկիդրն Առաքելագործ մատենին ղնէ (Կոր., 34):

Այսպիսի օրինակներում ընդգծված բայերը կարելի է նաև շփոթել որդես պատմական ներկա, քանի որ սլատմիչները ներկայացնում են այնպիսի տեղեկություններ, որոնք թեև կատարվել են շատ առաջ, բայց դրավոր ավանդված (որևէ մատյանում, թրդթում) հասել են մինչև իրենց ապրած ժամանակաշրջանը: Եթե դրանք բանավոր ասված լինեին, պատմիչները այդպես չէին ներկայացնի, բայց որովհետև գործողությունը իրացված է գրութեամբ, այդ պատճառով էլ այն ներկայացված է ներկա ժամանակով:

Պատմական ներկայի գործածության հաճախականությունը միևնույն լեզվում և միևնույն ժանրի ստեղծագործության մեջ կախված է նաև հեղինակի անհատական ոճից:

Եվրոպացի ուսումնասիրողներից մեկը՝ Մուլթոնը, հաշվելով Աստվածաշնչի շորս ավետարաններում գործածված պատմական ներկաները, տեսնում է, որ Մարկոսը պատմական ներկա է օգտագործել 151 անգամ, Մատթեոսը՝ 78, Ղուկասը՝ 4, իսկ Յովհաննեսը՝ 162 անգամ²⁶:

26 Кузнецов Т. С. К вопросу о praesens historicum в русском литературном языке (Доклады и сообщения филологического ф-ка, МГУ, вып. 8, 1949. стр. 26).

Մուլթոնը քանակական այդ տարբերությունը բացատրում է հետևյալ կերպ. «Մարկոսը ժողովրդի ժողից դուրս եկած մարդ էր. նա առօրյա խոսակցության մեջ հաճախ էր լսել այդ ոճը և այդ իսկ պատճառով էլ հաճախակի օգտագործում էր Ղուկասը հունական կրթություն ունեւոր, բայց այն աստիճանի կրթված չէր, որ օգտագործեր այդ ձևը՝ որպէս ունական միջոց (դասական հեղինակներին, որոնք շատ էին օգտագործում այդ ձևը, նա, հավանական է, չի կարդացել)։ Հովհաննէսը, ունենալով փիլիսոփայական խոր պատրաստականություն, լայնորեն օգտագործում էր պատմական ներկան որպէս ոճական տարածված միջոց»²⁷։

Մենք նույնպէս հաշվեցինք ավետարաններում օգտագործված պատմական ներկաները (գրաբար)։ Պատկերը հետևյալն է. Մարկոսի ավետարանի թարգմանության մեջ կա 33, Մատթեոսի ավետարանում՝ 17, Յովհաննէսի մոտ՝ 25, իսկ Ղուկասի ավետարանում ընդամենը մեկ պատմական ներկա։

Ահա այդ օրինակը՝ Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին (Ը, 49)։ Չենք հաշվում ասեմ բառի գործածության դեպքերը, քանի որ, ինչպէս նշել ենք, այս բառը ունի ներկա ժամանակով ուրույն գործածություն։

Վերը բերված թվերը հաստատում են, որ գրաբարը հին հունարենի համեմատությամբ պատմական ներկան ավելի սակավ է գործածում։

Պատմական ներկան, ի տարբերություն բուն ներկայի, ոչ թե արտահայտում, մատնանշում է իրական գործողության ընթացքը, այլ միայն անվանում է այն։ Պատմական ներկայի շատ հատկանիշներ համընդհանուր են լեզվա-ոճական այդ միջոցը ունեցող լեզուների համար, բայց անշուշտ, այն ունի նաև առանձնահատուկ, հակադրող հատկանիշներ՝ կապված ավելի լեզվի ու այդ լեզվով խոսող ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունների հետ։

ՆԵՐԿԱՅԻ ԴՈՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՌԵԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԻՄԱՍՏՈՎ

Կարելի է առանձնացնել սահմանական ներկայի՝ նշված գործառության հետևյալ դեպքերը։

ա) Հաճախ, երբ նախադասության մեջ բայերից մեկը, մեծ մասամբ նախընթաց բայը, դրվում է առաջին ապառնիով, երկ-

²⁷ Անդ։

րորդը գրվում է ներկա ժամանակով՝ արտահայտելով ասպառնու-
իմաստ: Օրինակ՝ Քէ ընդդեմ դառնայցէ յարեւել ևս արկանէ (Եղն.,
19): Եթէ ճշմարիտն որ Բենիցէ զիրսն, գտանէ յանհնարին վտանգս
(անդ, 31): Բայց եթէ զարիւն ոք ըմպիցէ սատակի (անդ, 6): Եթէ
վերին վայրացն ունիցի ծանրութիւն ինչ ի վերջավայրս երկրիս
զայ հասանէ (Բրսղ., Ա, 19): Նման տիպի օրինակներ շատ կան
հատկապէս Աստվածաշնչում:

բ) Ասպառնու փոխարեն ներկա է գործածվում նաև այն դեպ-
քում, երբ նախընթաց որևէ բառ պահանջում է ասպառնու իմաստ:
Օրինակ՝ Հաւրկ է թէ բարի և բարեբար ասեն և շարութիւն ինչի նա ոչ
մերձենայ (Եղն., 244): Զսէք և զերկեւզ բնութիւն արա քեզ, որ խա-
բէութեամբ չաշխատիս (անդ, 299): Եւ արդ երդուաւրով ինձ ի տէր
Աստուած, դի առնեմ ձեզ ողորմութիւն (Յեսու., Ք, 12):

Երբեմն ներկա ժամանակաձևով գրված բայի ասպառնու ի-
մաստը հուշում է երկրորդ կամ բազմադրյալ ասպառնիով գրված
որևէ բայ: Այսպէս՝ Դու ի մեր կոյս լինիս, դիտեմք դի մեր լինելոց
է յաղթութիւն (Բուդ., 20): Եթէ ոչ աճապարեացես վաղագոյն ըս-
պանցես զնա, զու կորնչիս և աշխարհս հայոց (անդ, 98):

գ) Ներկան ասպառնու իմաստով գործածվում է այն ժամանակ,
երբ ենթադրվում է գործողության ստույգ կամ անմիջական կատա-
րում մոտ ասպադայում: Օրինակ՝ Վասն որոյ նահատակքն վկայէին
արդեամբ մօտ առ նոսա տեսեալ պատմեմք (Եսեբ., 631): Ընդ-
դժված բայն արտահայտված է ներկայով, որովհետև հեղինակն
անմիջապէս սկսում է պատմութիւնը: Հմմտ. Արդ հիշե՛ալ դմեզ
տէր, որ վասն անուան քո մեռանիմք (Աղաթ., 162): Գործողութիւն-
ընդ այստեղ դիտվում է որդեա անխուսափելի, շուտով գալիք մի
բան (այդ այն պահն է, երբ պատրաստվում են կույսերին մահա-
պատժի ենթարկել): Կամ՝ Աւասիկ ախոեան ելանեմ քեզ (Աղաթ.,
44): Այստեղ ներկան ասպառնու իմաստ ունի դարձյալ նույն պատ-
ճառով: Այդ բանը ավելի է հաստատում հաջորդ նախադասութիւն-
ընդ, որի բայը գրված է երկրորդ ասպառնիով՝ Հասցուք եկեսցուք ի
մարտի տեղի: Եթե ես զքեզ յաղթահարեցից և այլն:

Երբեմն դժվար է որոշել, ներկա ժամանակը հանդես է գալիս
իր բուն, թե՛ երկրորդական փիրառությամբ (խոսքը ներկա-ասպառ-
նի գործածության մասին է): Ինչպէս՝ Եւ որ հեղու զարիւն արդա-
րոյ, հեղցեն զարիւն նորա (Եղն., 249): Իսկ որ համբերէ միամը-
տութեամբ ի դառանցն, ի ժողովրդոցն, կամ ի քահանայիցն, թեւս
առնուցուն և յարքայութիւն Քրիստոսի վերանան (Աղաթ., 386):

Նման բնույթի օրինակներում ներկա ժամանակով դրված բայր կարելի է դիտել թե՛ ներկա և թե՛ ապառնի։ Առաջին նախադասությունը, օրինակ, հնարավոր է թարգմանել և՛ «Ով թափում է արդարի արյունը, կթափեն (նաև) իր արյունը», և՛ «Ով թափի արդարի արյունը, կթափեն նաև իր արյունը» (հնարավոր է, իհարկե, նաև հեղցեն ապառնու՝ ներկայի իմաստով գործածությունը, որը կքննարկենք իր տեղում, խոսքը այստեղ միայն ներկայի մասին է)։ Այստեղ տարբեր ժամանակների գործածությունը նախադասությունյան իմաստի վրա չի ազդում, և հնարավոր է ներկա ժամանակի ինչպես բուն, այնպես էլ ապառնու իմաստով կիրառությունը։

* * *

Բերված օրինակներից ու դասակարգումներից կարող ենք եզրակացնել, որ դասական գրաբարում շատ տարածված երևույթ էր ներկա ժամանակի՝ ապառնու իմաստով՝ գործածությունը։ Որոշ քերականներ նույնիսկ այն համարում են գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի՝ էական մի հատկությունը։

Իսկ ի՞նչ ճանապարհով է ծագել այդ գործածությունը։ Դժվար է տալ այս հարցի սպառիչ պատասխան։ Այստեղյալը բացատրում է հետևյալ կերպ. «Այդ գործածության դիրին է ծագումը գուշակելու Քանի որ բուն հին ժամանակները յատուկ տոգրադասական անկատար շունէր լեղում, այլ շատ անգամ սահմ. անկատարն անոր պաշտոնն ալ կըկատարեր. քանի որ կըսուէր թող ինքն երթայր և առնայր, այն սահմանականը քնականապէս և անդալարար կառաջնորդէր այս սահմանականիս և ըսել կուտար նոյն կերպով՝ թող ինքն երթայ և առնու, փոխանակ՝ թող ինքն երթիցէ և աոցէ ըսելու»²⁸,

Ավելացնենք նաև, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում նույնպես ներկան հանդես է դալիս ապառնի ժամանակի իմաստով (լատիներենում, ֆրանսերենում, պարսկերենում և այլն)։ Ռուսերենում ավելի հաճախ նշված կիրառությամբ հանդես են դալիս շարժման բայերը՝ գնում եմ, մեկնում եմ, վեր եմ կենում և այլն, ինչպես նաև ճաշում եմ, ծխում եմ, հանդիպում եմ բայերը²⁹,

Կանգ առնենք մի հարցի վրա ևս։ Գրաբարի քերականների մեծ

28 Ա. Ալտրենբաե. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Էրեւնա, 1866. էջ 74։

29 Бондаренко А. В., Вид и время русского глагола. Москва, 1971. стр. 155.

մասը (եթե ոչ բոլորը) ներկա ժամանակի նշված կիրառության մեջ տեսնում են միայն ներկայի՝ առաջին ապառնու իմաստով գործառնություն:

Անժխտելի է, որ իրոք դասական գրաբարում հաճախ ներկան կողք-կողքի հանդես է գալիս առաջին ապառնու հետ՝ ունենալով վերջինիս ժամանակային իմաստը: Բայց անվերսուպահորեն ընդունել, որ ներկան փոխարինում է միայն առաջին ապառնուն, ճիշտ չի լինի, որովհետև, կիրառվելով ապառնի ժամանակի փոխարեն, սահմանական եղանակի ներկան հանդես է գալիս հիմնականում արդի հայերենի ըզձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիների իմաստով: Իսկ նշված գործառնությամբ ինչպես կտեսնենք ապառնիների քննության ժամանակ) հավասարապես հանդես են գալիս ինչպես առաջին (գրիգեմ), այնպես էլ երկրորդ (գրեցից) ապառնիները: Ապառնիները հիշյալ կիրառության դեպքում իմաստային-գործառական հոմանիշներ են: Եվ եթե մի որևէ այլ բերականական ժամանակ արտահայտում է ապառնու իմաստ, ապա նա բնականաբար «փոխարինում» է երկու ապառնիներին էլ, և ոչ թե միայն առաջին ապառնուն:

Կարելի է բերել նաև այնպիսի օրինակներ, երբ երկրորդ ապառնին ու ներկան են հանդես գալիս կողք-կողքի, ընդ որում՝ վերջինս իր երկրորդական (ապառնիական) կիրառությամբ: Այսպես՝ Ոչ ոք լիցի մեր հովիվ, բայց ի դման է և ոչ ոք նստի այլ տանմ աթոռ, բայց դա (Բուդ., 107): Եղիա զայ և հաստատեսցէ զամենայն (Մատթ., ԺԷ, 11): Պատմեցից բեղ զճշմարիտն վասն ժողովրդեանդ, որ բնակեալ են ի լեռնակողմանդ յայդմ որ մերձաւ բեդս է և ոչինչ ելանէ ստութիւն ի բերանոյ ծառայի քոյ (Յուդիի, Ե, 5): Զի եթէ քննեսցէ որ գդիրս սուրբս, յամենայն աստուածաշունչ մատեանսն զսոյն և դաստուածեղէն յաճախութիւն հոգևոր սլատղամայնն զտանէ որ (Բուդ., 133):

Նման բաղմաթիվ օրինակներից հեշտ է եզրակացնել, որ ներկան հանդես է գալիս նաև երկրորդ ապառնու փոխարեն: Բայց վերջին հաշվով, ներկայի այգպիսի գործառական բաժանում չպետք է կատարել: Այն պիտք է դիտել սոսկ որպես ներկայի երկրորդական կիրառություն՝ ապառնի ժամանակի (ոչ սահմանական) իմաստով:

Ներկա ժամանակի կիրառության վերաբերյալ կատարել ենք նաև որոշ վիճակագրություն՝ հիմնականում ոչ թարգմանական

գործերից: Առաջին հերթին մեզ հետաքրքրել է ներկա ժամանակով գործածված բայերի քանակը՝ ըստ առանձին հեղինակների:

Յուրաքանչյուր հեղինակից 5.000 բառի սահմաններում կատարված հաշվումների արդյունքը հետևյալն է. Եզնիկը օգտագործել է 204, Բուզանդը՝ 42, Կորյունը՝ 62 (Կորյունի ամբողջ գրքով կը 5.000 բառից քիչ է), Իսկ Ագաթանգեղոսը մոտ 100 ներկա:

Քանակական այս տարբերությունը, անշուշտ, առաջին հերթին պայմանավորված է աշխատությունների բովանդակությամբ:

Այս բանում համոզվելու համար նույն հաշվումները կատարեցինք նաև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ից, որը իր շոշափած հարցերով շատ նմանություններ ունի Եզնիկի գրքի հետ. «Վեցօրեայք»-ում (դարձյալ 5.000 բառի սահմաններում) օգտագործված է 225 ներկա:

Դասական շրջանի հեղինակներից Բուզանդը առհասարակ խուսափում է ներկա ժամանակի գործածությունից: Նրա պատմությունն մեջ ամենից շատ փիրատված է անցյալ անկատար ժամանակը. ընդ որում, վերջինս հաճախ արտահայտում է ինչպես ներկայի, այնպես էլ կատարյալի փմաստ: Կորյունի, մասամբ նաև Ագաթանգեղոսի մոտ բայական ժամանակների, այդ թվում և ներկայի փոխարեն բազմիցս հանդես է գալիս անցյալ դերբայը:

Դասական շրջանի բոլոր գործերում ներկա ժամանակի այնպիսի կիրառությունները, որտեղ մատնանշված գործողությունները կապվում են խոսքի պահի հետ, զգալիորեն ավելի քիչ են, քան ներկայի երկրորդական կամ բուն փիրատության այն դեպքերը, երբ գործողության կատարումը չի համընկնում խոսքի պահին:

Բայց չնայած դրան, ներկա ժամանակի գլխավոր հատկանիշը պետք է համարել խոսքի պահին կառավարվող գործողության մատնանշումը, որովհետև վերջինս կարող է արտահայտվել միայն ու միայն այդ ժամանակով:

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԵՎ ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ, ՆՐԱՆՅ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Անցյալ անկատարի ամենաէական հատկանիշը նրա արտահայտած գործողության անավարտությունն է: Նշված ժամանակը կարող է ցույց տալ գործողության սկիզբն ու ընթացքը, բայց նրա

ավարտը այն երբեք չի նշում: Այս հատկանիշը, որպես զխավոր, արտահայտված է հենց այդ ժամանակի անվանման մեջ:

Անցյալ անկատարով արտահայտվում են՝

ա) Անցյալում տեղի ունեցած շարունակվող, տեական գործողությունները. Մուշեղ զորավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն եւ Բաբէրէր զատրուշանսն մաղղեղացն (Բուդ., 4, Դ, 117): Յայժմ ես վասն բոյաշտ առնէի (Նզն., 115): Եւ յետ այսորիկ Յիսուս շրջէր ի Գալիլեա, քանդի ոչ կամէր ի Հրեաստանի շրջել (Յովհ., է, 1):

բ) Կրկնվող գործողություններ. Ամի ամի ժողովեալք խմբեալ ցնծային (Բուդ., 3, 12): Կամ օդք երբեմն զսառամանիսն շնչելով եւ երբեմն զխորշակն բերելով եւ լինէր ամենայն ինչ ոչ ինչ (Նզն., 17): Եւ յորժամ ուտել կամենայր, զձեռնն ի սափորն արկանէր եւ որ զայր ի ձեռին վայն ուտէր (Վրք., հրնց., 89):

Նշենք, սակայն, որ ինչպես գործողության տեականությունը, այնպես էլ կրկնությունը գործածության ոլորտի հետ կապված երևույթներ են և «ինքնին» բնորոշ չեն անկատարին:

գ) Մեկ այլ գործողության սկսվելու պատճառով ընդհատվող գործողությունները. Եւ առաջին կրօնք խուժականք եւ սկիւթականք եւ հեթանոսականք կոչէին մինչեւ եկն Աբրահամու աստուածապաշտութիւնն եւ աղաւաղեաց զայն (Նզն., 207): Ոչ որ հուպ շիշիւէր երթալ, մինչեւ նեխեցան մարմինք նոցա (անդ, 75): Ընդգծված բաժնրով արտահայտված գործողությունները, որոնք կատարվում էին ինչ-որ ժամանակ, այլևս չէին կարող շարունակվել՝ մի այլ գործողության սկսվելու պատճառով:

դ) Անցյալում տեղի ունեցած նկարագրվող գործողությունները. Քաջասիրտք եւ պնդակաղմք պատուի եւ պսակի հաւանէին եւ վատասիրտք եւ տաղնասլեալք կորուսանէին զյաղթութիւնն: Դասակք դասակք աւղեաց մտանէին խիղախելով եւ պառակք պառակք այծեաց ելանէին սեւցեալք դունովք ուրացութեանն: Մտանէին սուրբք եւ ուպիտակք եւ ելանէին աղտեղիք եւ արինոտ: Սատանայ եւ զեւք խնդային ընդ անհնարին բեկումն մեր եւ այսք պիղծք ցնծային ընդ կորուստ ապականութեանն (Վկայք, 41):

Որոշ նկարագրության ժամանակ երբեմն անկատարով արտահայտված գործողությունը նման է վիճակային հարաբերության: Օրինակ՝ Ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն... մօտ ի բուն պողոտայն, որ եւրայր յԱրտաշատ քաղաք (Աղաթ., ԺԶ, 15): Առ դուրս հնձանին էին օթեւանք նոցա (անդ, Ժ, 545):

Առաջին նախադասության մեջ երթայր բայը կորցրել է անկատարության հատկանիշը և արտահայտում է հարատևող վիճակ. որի ոչ սկիզբը և ոչ էլ վերջը հայտնի չէ:

Անկատարով են դրվում նաև որպես պրոցես դիտվող երևույթները: Ինչպես՝ Եւ մանուկն անէր ևւ զօրանայր հոգւով (Ղուկ., Ա, 80): Իսկ տեղին աւանանայր քաղաքանայր (Բուդ., 4, ԺԲ, 157): Եւ զօրանայր ջուրն և բազմանայր յոյժ ի վերայ Երկրի ևւ շրջէր տապանն (Մանդ., է, 19):

Երր շարժումը, զարգացումը հասնում է որոշակի կետի, անմիջապես նկարագրությունն սկսում է կատարվել անցյալ կատարյալով: Այդպես է Աստվածաշնչից վերը բերած օրինակի շարունակությունը՝ Հնգետասան կանգուն քարձրացաւ ջուրն ի վեր և ծածկեաց վամենայն լերինս:

Քանի դեռ ջուրը չէր հասել որոշակի բարձրության, հեղինակը օգտագործում է անկատար, իսկ հասնելուց հետո՝ կատարյալ:

Գրաբարում անցյալ անկատարը կատարում է նաև, այսպես կոչված, ստորադասական անկատարի գործառություն, քանի որ վերջինս հատուկ ձև չունի:

Ամենից շատ անկատարի նշված կիրառությանը հանդիպում ենք եթե... ապա կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում: Օրինակ՝ Եթէ ոչ ձիւն և սառնամանիք պնդէին ղլերինս, արմատք խոռոց ոչ պարարէին և եթէ տօթ օեռուցանէր պտուղք ոչ հասանէին (Եզն., 70): Եւ եթէ արդարեւ առիծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր (անդ., 160): Զի եթէ հարուստ ոք էր նա քան զչարեացն արարիչ, ոչ տայր նմա զվնասակարութիւնսն... (անդ., 183):

Անցյալ անկատարը այս կիրառությամբ գործածվում է նաև րոզ, երանի բառերի հետ. Թող ինքն նախ երթայր և առնոյր զթագաւորութիւնն և ոչ Արհմենայ որ ոչ զխորհուրդն հօրն գիտէր (Եզն., 135): Գոշթազդ ասէ, Երանի թէ շնչաւոր և կենդանի ինչ արարածոց տայիւր երկիր պաղանել (Վկայք, 124): Լուարո՛ւք, Լուարո՛ւք բանից իմոց: Երանի թէ մի լինէր ի ձէնջ այդ միսիթարութիւն (Յոր., ԻԱ, 2): Երանի թէ ի դժոխս պանէիւր զիս ևւ քաբուցանէիւր զիս մինչեւ անցանէր բարկութիւն քո:

Անկատարը երբեմն հանդես է գալիս դերբայի փոխարեն: Օրինակ՝ Որ ելանէին և մտանէին, զարմանային ընդ աւտարտի իրսն զոր տեսանէին (Վարք., 121)—իմա՝ ելնողները և մտնողները: Եւ նայեցեալ ընդ Յիսուսի զի գնայր ասէ (Հովհ., Ա, 3)—իմա՝ գը-

նագող Հիսուսին: Եւ եղեւ ահ ի վերայ ամենեցուն, որ լսէին զայս (Ղուկ., Ա, 65):

Անկատարը կարող է հանդես գալ նաեւ վաղակատար (հարակատար) ժամանակների փոխարեն: Այս կիրառութեամբ ամենից հաճախ հանդես է գալիս նստիմ բայը: Նման օրինակները շատ են Կատկայեան թարգմանական գործերում: Օրինակ՝ Գառն առ Յիսուս եւ տեսանեն զԴիւանարն, զի նստէր զդեցեալ եւ զգաստացեալ (Մարկ., Ե, 15) — իմա՝ որ նստած էր: Եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զաստատանաւ միով զարքային Պարսից, իսկ ախոռապետն արքային նստէր ի ներքս ի տան աստատանին (Բուդ., 4, ԺԶ, 193):

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Անցյալ կատարյալ ժամանակն ունի հիմնականում մեկ կարեւոր հատկանիշ: Ի տարբերութիւն անկատարի, կատարյալը ցոյց է տալիս ավարտված գործողութիւն: Այսպէս՝ Եկեր Անտոն զմի կոտորն ալ եւ ոչ մերձեցաւ. իսկ ծերն յուշիկ ուտէր (Վարք, 3): Միեւնոյն գործողութիւնն արտահայտված է մեկ կատարյալով՝ եկեր, մեկ անկատարով՝ ուտէր, որովհետեւ Անտոնը կերել եւ վերջացրել է, իսկ ծերը դեռ շարունակում է ուտել:

Երբ գործածված է անցյալ կատարյալ ժամանակը, ապա ըզգացվում է, որ հեղինակը չի պատմում կամ նկարագրում, այլ ներկայացնում է անցյալում կատարված գործողութիւնները: Օրինակ՝ Զոգաւ դիմի նոցա եւ վերացաւ, սին ամպոյն յերեսաց նոցա եւ եկաց ի թիկանց նոցա եւ եմուտ ի մէջ բանակի եգիպտացոցն եւ եգի խաւար եւ մէգ. եւ անց գիշերն, եւ ոչ խառնեցան ընդ միմեանս զամենայն գիշերն (Ելք, ԺԴ, 19—26):

Իսկ երբ հեղինակը պատմում է, նկարագրում գործողութիւնները արտահայտվում են անցյալ անկատարով: Օրինակ՝ Եւ Հերովդէս ոխացեալ էր ընդ նմա եւ կամէր սպանանել զնա եւ ոչ կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր արդար եւ սուրբ եւ սպասէր նմա. եւ լուեալ ի նմանէ բազում ինչ՝ առնէր եւ բազմութեամբ լսէր նմա: Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս ապա Հերովդէս... (Մարկ., Զ, 19—21):

Ինչպէս նախորդ, այսպէս էլ այս վերջին օրինակները վերաբերում են անցյալին. հեղինակի պատմելու պահից առաջ կատարված գործողութիւններն են, բայց արտահայտված տարբեր ժամանակաձևերով, եւ դա պատահական չէ: Մի դեպքում մենք գործ ունենք «շոր» փաստերի հետ, իսկ վերջինում՝ նկարագրութեան:

Ի՞նչ է այդ նկարագրությունը: Վերջին պարբերության հիմնական միտքն այն է, որ Հերովդեսը կամենում է սպանել նրան: Բայց եթե հեղինակը հայտնեւո՞ւ լիներ լոկ այսքանը, ապա անշուշտ, կօգտագործեր անցյալ կատարյալ՝ Հերովդէս կամեցաւ սպանանել զնա: Սակայն պարբերության մեջ այդ միտքը շաղկապված ու լրացված է այլ գործողություններով: Պարզ է դառնում, թե ինչո՞ւ էր ուղում սպանել Հերովդեսը (որովհետեւ ռիացեալ էր ընդ նմա), ինչո՞ւ չէր կարողանում սպանել (զի երկնչէր ի նմանէ) և այլն:

Դա, իհարկե, չի նշանակում, թե հնարավոր չէ որևէ նկարագրություն՝ անցյալ կատարյալով: Ահա մի գեղեցիկ հատված. Ահա ձմեռն անց, անձրեւ անցին և գնացեալ մեկնեցան, ծաղիկք երկվեցան յերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատարակի լսելի եղև յերկրի մերում, թզենի արձակեաց զբողբոջ իւր, որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց (Երգ ևրգոց, Բ, 10—13):

Անկատարով և կատարյալով արտահայտված նկարագրությունների տարբերությունն այն է, որ առաջին դեպքում մենք գործ ունենք պրոցեսի հետ, իսկ երկրորդում՝ ավարտված գործողությունների՝ զուրկ զարգացման պոտենցիալ հնարավորությունից:

Խոսելով անցյալ կատարյալի յուրահատկությունների մասին, ուսումնասիրողները նշում են, որ մի անգամ կատարված վերջացած գործողությունը արտահայտվում է կատարյալով: Այդպես է ոչ միայն աշխարհագրում, այլև մի շարք հին ու նոր լեզուներում: Ինչ վերաբերում է գրաբարին, ապա պետք է ասել, որ այդ կիրառությամբ դասական գրաբարում հանգես է գալիս նաև անցյալ անկատար: Ինչպես՝ Առնոլդին և գվաղարչապատ քաղաք, քանգէին բրէին զքաղաքն... Առնոլին և զմեծ քաղաքն զԵրուսաղեմա շատ և խաղացուցանէին անտի քաղաքս հազար հայ (Բուզ., ԾԵ, 262):

Անցյալ կատարյալը երկրորդական կիրառությամբ կարող է հանդես գալ ապառնու իմաստով: Ապառնիության իմաստը զգացվում է եթէ, զի, ուր բառերի գործածությունից, կամ էլ նույն նախադասության մեջ հանդես եկող ապառնի ժամանակով դրված մի ալ բայից: Օրինակ՝ Այլ յայսոսիկ են դատաւտանք իւրաքանչիւր ուրուք, եթէ զհաւատսն պանեաց և զպատուիրանսն ամտադրութեամբ ընկալաւ (Վրք. հրնց., 31): Եթէ գնաց (իմա՝ գնացէ) սիրտ իմ զհետ կնոջ առն այլոյ, եթէ դարանակալ եղէ առ դրունս տան նո-

րա, ապա լիցի հաճոյ եւ իմ կին ալլում և մանկունք իմ տառապեսցին (Տոր., ԼԱ, 9—10)։

Կատարյալի գործածությունը ապառնի ժամանակի փոխարեն՝ ժողովրդական խոսքի ձև է և արտահայտում է անկասկածություն, համոզվածություն, գործողությունը դիտում իբրև հաստատուն իրողություն, որը վրա կհասնի անմիջապես, առանց հապաղելու։

ԱՆՏՅԱԼ ԱՆԿԱՏԱՐԻ ԵՎ ԱՆՏՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԿԻՐԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԵԿԸ ՄՅՈՒՍԻ ՓՈԽԱՐԵՆ

Գրարարի ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն բոլոր գործերում հաճախ այդ երկու ժամանակները գործածվում են կողք-կողքի՝ համարժեք իմաստով։ Նման դեպքերում անցյալ անկատարը կորցնելով իր բնորոշ անավարտության հատկանիշը, հանդես է գալիս անցյալ կատարյալի փոխարեն։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժողովրդական ավանդություններում, բանահյուսության մեջ ավելի շատ գործ է ածվում անկատար ժամանակը (խոսքը վերաբերում է անկատարի՝ կատարյալի իմաստով գործածությանը)։ Այդ հատկապես ակնառու է նախադրային շրջանից մեղ ավանդված պատառիկներում։

Վ. Առաքելյանը Վահագնի երդի կապակցությամբ գրում է. «Բոլոր րայերը գործ են ածված անցյալ անկատար ժամանակով»³⁰։

Անկատարը ձկունություն ու կենդանություն է հաղորդում սլատմությունը։

Սահմանակալ անցյալ անկատարը հաճախ գործ է ածվում իբրև պատմական ժամանակի Օրինակ՝ Առեալ այնուհետև երանելուն յհնաւորացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարզ և յանդարման տեղիս Գողթան (Կոր., 44)։ Իսկ Հաբելին զայն լուեալ փութանակի հասանէր առ Դանիէլն և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանադրացն և ապա առաքէր առ արքայն յերկիրն Հայոց (անդ, 44)։ Թադաւորն Վաղես զայս լուեալ խնդալից լինէր (Բուդ., 4, 150)։

Երբևմն բնագրից զգացվում է, որ անկատարը գործառում է սլատմական ներկայի փոխարեն։ Անցյալում կատարված գործողությունները հեղինակը շարադրում է մեկ ներկա ժամանակով, մեկ՝ անկատարով։ Ինչպես՝ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր ի ծունր իջանէր և ասէր (Մարկ., Ա, 40)։ Եւ սակաւ սակաւ յառաջ մատուցեալ հասանէ ի լեառն մի ապառաժ և գտանէ անդ քարայր մի փակեալ փոքր քարիւ միով և զայն ի բաց թաւալեցուցեալ ի ներքս

30 Վ. Առաքելյան, Գրարարի հատրնտիր, 1946, Երևան, էջ 17։

մտանէր (Վրք. հրնց., 5)։ Եւ այն են զարմանք, զի մինն ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր... (Եզն., 124)։

Շատ դեպքերու, երբ ներկա ժամանակով դրված բայ չկա, դժվար է որոշել՝ անկատարը հանդես է դալիս որպես ներկա (պատմական), թե՞ որպես կատարյալ։ Յերկնից ոյժ առեալ եռանդնոտ հոգւով սրբով արամբ զլեզուն ինքեան կտրէր և փոխանակ համբոյրի յերեսս պոռնկին քֆանէր և այնպես զբոց ցանկութեան շիօցանէր կարեօք մեծ ցաւոցն (Վրք.)։ Զայս իբրեւ լսէր թուխն անդէն վաղվաղակի ի բաց փախչէր և զարհուրեալ նա յերանկուոյն յերկեղի մեծ լինէր, ալ ևս մերձենալ հայր ոչ իշխէր (անդ., 22)։

Ընդգծված բայերը կարող ենք թարգմանել թե՛ ներկայով, թե՛ կատարյալով։

Բայց հանդիպում ենք բազմաթիւ օրինակների, երբ կատարյալն ու անկատարն են կողք-կողքի, և երկու բայաձևերն էլ արտահայտում են ավարտված դործողություն։ Նշանակում է՝ այստեղ իբրոք գործ ունենք անկատարի՝ կատարյալի իմաստով գործածության հետ։ Սրինակ՝ Իսկ թագաւորն Արշակ, իբրեւ լուաւ եւ ետես զայս ամենայն, անշնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն (Բուղ., 4, ԺԱ)։ Այս բանք վաղագոյն աղդ լինէին առ թագաւորն Հայոց Արշակ և առ զօրավարն նոցին Վասակ, ապա սոքա բաղում զօր յաշխարհէ ժողովեցին... (Բուղ., 4, ԻԲ)։ Եկն երբէմն ծեր մեծ առ հայրն Անտոն և նստէր և տեսեալ զնա հօրն Անտոնի ասաց (Վրք. հրնց., 117)։

Եւ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նման օրինակները բազմաթիւ են և այն էլ ամենատարբեր գործերի մեջ, ապա կարելի է եզրակացնել, որ գրաբարում անցյալ անկատարը հավասարապես գործածվում է նաև անցյալ կատարյալի փոխարեն։

Որպեսզի այս ենթադրությունը փաստազուրկ չթվա, փորձենք այն հիմնավորել։

1) Դրաբարի շատ ուսումնասիրողներ նշում են այդ ժամանակների գործածությունը կողք-կողքի առանց ոճական որևէ տարբերության։

«Երկու երեք յաջորդող կատարեալներուն վերջինն անկատարի կը դարձուի»,—նշում է Այտընյանը³¹։

«Հաճախ, երբ հարկավոր է երկու կամ ավելի անցյալ կատարյալներ գործածել, առաջինը դրվում է անցյալ կատարյալով, իսկ մնացյալը փոխվում է անկատարի»³²։

31 Զալլիսեան—Այտընեան, նշվ., աշխ., էջ 283։

32 Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 17։

Ուրիշ ուսումնասիրողներից նույնպես կարելի է մեջբերումներ կատարել, բայց բավարարվենք այս երկուսով: Օրինակները շատ են:

2) Հաճախ, հեղինակը անցյալ անկատար է օգտագործում մի անգամ կատարված, ավարտված գործողությունը նշելու համար. Ասպա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, հօր սատկեաց զՎահան զհայր իւր և զՈրմիղդուստ, զմայր իւր եւ ինքն փախստական լինէր յերկիրն խաղտեաց (Բուդ., 4, ԾԹ, 272): Ասպա յետ այնորիկ առնույր թուղթս յեպիսկոպոսէ բաղաքին և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ յեպիսկոպոսն Ասորոց (Կոր., 50): Զայն լուեալ մահմեայ զիւի վաղվաղակի առ Ռմիղզ հասանէր (Եղն., 139): Ի տեղւոջն յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին (Բուդ., 4, ԺԶ, 190):

3) Ընդհանրապես անցյալում կատարված ու ավարտված գործողությունները ավելի շատ արտահայտվում են անցյալ անկատարով: Համեմատության համար բերենք Կորյունի զրքից մի փոքր հատված և այդ հատվածի թարգմանությունը:

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական շափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն և առեալ զխաշն սլարժանաց՝ ելանէր զկնի սմենակեցոյց խաշելոյն: Եւ հաճեալ հրամանացն ի խաշակիր գունդն Քրիստոսի խառնէր և անդնն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր: Բազում և աղղի աղղի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց (էջ 33):

Եւ գրանից հետո նա ըստ ավետարանական կանոնի դարձավ մարդասեր աստծու ծառայութեանը. այնուհետեւ մերկացավ (իրենից) իշխանական ցանկությունները և սլարժանքի խաշն առնելով՝ դուրս եկավ ամենակեցոյց խաշվածի ետեհից: Եւ հավատքի հրամանները հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաշակիր զնդին ու շուտով ստավ միայնակեցական կարգի մեջ: Շատ և տեսակ-տեսակ վշտակեցություններ կրեց ըստ Ավետարանին ամեն բանով³³:

Գրաբար հատվածում անցյալ կատարյալով դրված որևէ բայ չկա, իսկ աշխարհաբար թարգմանության մեջ, ընդհակառակը, բոլոր անկատարները դրված են կատարյալով: Ավելացնենք նաև, որ նման հատվածներ ոչ միայն Կորյունի, այլև դասական շրջանի մյուս հեղինակների մոտ եղակի չեն:

³³ Բնադիրը և թարգմանությունը՝ Մաեուկ Աբղղյան. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Այս հարցի վերաբերյալ կատարել ենք նաև վիճակագրություն: Բուզանդի պատմության 3-րդ դպրության Ա—ԺԱ գլուխներում անցյալ կատարյալ գործածված է 187 անգամ, իսկ անկատարը կատարյալի փոխարեն՝ 109 անգամ, 4-րդ դպրության Ա—Դ (նեբառյալ) գլուխներում անցյալ անկատարը կատարյալի փոխարեն կիրառված է 87 անգամ: Նման գործածությունները ավելի շատ ան 5-րդ դպրության մեջ:

Միևնույն կամ իմաստով մոտ բառերը մերթ հանդես են դալիս անկատարով, մերթ կատարյալով, այն էլ հաճախ նույնանման շրջապատում: Օրինակ՝ Եւ մինչդեռ նա խօսէր, այլ հրեշտակ եկն եւ ասէ ցՅոր... (Յոր., Ա, 17): Եւ մինչդեռ նա խօսէր այլ հրեշտակ գայր և ասէր ցՅոր... (սմդ., 18): Իբրեւ եհաւ նմա, հաւաւնէր ի վերայ տօթ (Վրք., հրեց., 110): Եւ հրամայեաց ի դահճէ միոջէ ի ծով անդր հոսել և զայն շափ հոգի առանց յանցման կորուսանել և կատակութեամբ ծաղու հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ (Բուդ., 3, Ժ, 37): Հրաման տայր և բերին զհանդերձս կղերկոսաց զղեցուցանէին նմա: Ետ հրաման եւ կոչեցին զծերունի և պիսկոպոսն, որում անունն էր Փաւստոս (Բուդ., 4, 109):

«Վարք հարանց»-ի «Վասն հանդարտութեան» հատվածի ավեմ բայով սկսվող մի շարք պարբերություններում նշված բայը դրված է մերթ կատարյալով, մերթ անկատարով: Օրինակները բերում ենք ըստ պարբերությունների, փակագծերում նշելով էջերը. Ասաց ռմն զհայրն Արսէնիէ (1): Ասէր ռմն (2): Ասէր հայրն Մովստոյիս (3): Ասէր արբայ Աբրահամ աշակերտն արբայ Սիսոյի ցնա (6) և այլն:

Այսքանից հետո կարող ենք իրոք հավաստել, որ դասական գրաբարում անցյալ անկատարը անավարտ գործողություն արտահայտելուց բացի (տրով և նա տարբերվում է անցյալ կատարյալից) հավասարապես հանդես է դալիս նաև որպես ավարտված գործողության արտահայտման միջոց: Ընդ որում, այս գործածությունը չի սահմանափակվում փիրառության տրեւ ոլորտում:

Նման կիրառությունների դեպքում անցյալ անկատարի և անցյալ կատարյալի միջև կերպարին հակադրությունը վերանում է:

Գրաբարի անցյալ ժամանակների վերաբերյալ, ինչպես նշել ենք, չկա որևէ ուսումնասիրություն: Այդ հարցին համառոտակի անդրադարձել է Ա. Մեյեն³⁴, Մեծավաստակ գիտնականը առհա-

³⁴ A. Meillet, Recherche sur la syntaxe comparée de l'arménien, Vienne 1903.

սարակ փիշտ է ներկայացնում անկատարի և կատարյալի առանձնահատկությունները. որոշ հարցերում, սակայն, նրա դիտողութիւնները այնքան էլ համոզիչ չեն. Հայագետը ձգտում է ամեն կերպ որևէ սլասմառ գտնել և հիմնավորել կատարյալների կողքին անկատարի գործածութիւնը:

Բուզանգից քաղված հետևյալ օրինակում՝ Զայնու ժամանակաւ յարեալ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու... անկանէին ընդ միմեանս մեծաւ ոխութեամբ, յարուցին կռիւ և տային միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանաց, Մեյնն ընգծված անկատարների գործածութիւնը հիմնավորելու համար գրում է. «Երկու անգամ անկատարներ է գործածվում կռիւի զարգացումը նկարագրելու համար» (ընդգրծումը մերն է—Լ. Հ.): Ինչո՞ւ է զգացվում, որ երկրորդ նախադասութեան բայը գործողութեան զարգացում է ցույց տալիս: Թերևս ոչ մի բանով:

Իսկ ի՞նչ ասել այս նախադասութեան մասին՝ Յարուցեալ ընթացաւ վաղվաղակի, ի նոյն անապատն հասանէր (Վրք., 1, 12): Ընթանալը առարկայորեն նախորդում է երկրորդ գործողութեանը (ճասանէր): Առաջինի զարգացումով միայն կարելի է հասնել անապատ: Մյուս կողմից նախադասութեան իմաստից ակնհայտորեն երևում է, որ ճասանէր նշանակում է ճասալ (գործողութիւնը ավարտված է): Ուրեմն ըստ Մեյնի բացատրութեան պետք է լինել՝ «յարուցեալ ընթանալը վաղվաղակի, ի նոյն անապատն հասնաւ: Այնինչ, ինչպես տեսնում ենք, այդպես չէ:

Նշիշից քաղված՝ Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն վարդան և տեսանէր... օրինակի մասին Մեյնն գրում է. «Տեսնելու գործողութիւնը զարգանում է, մինչդեռ հայացք նետելու ավարտվածութիւնը որոշակիորեն արտահայտված է»³⁵, Սա նույնպես համոզիչ չէ: Բերենք օրինակներ հենց նույն բայով՝ արտահայտված անցյալ կատարյալ ժամանակով. Եւ իբրեւ երեկոյ եղեւ... ետես զնոսա հողմակոծեալս ի վարելն (Մարկ., 2, 47—48): Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թե առաջօր ինչ լինիցի (անգ): Ապա նայեցաւ թագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն և ետես զի քրտնեալ էր... (Բուղ., 4, Ը, 153):

Ոչ մի տարբերութիւն, թվում է, չկա ճայեցաւ և տեսանէր (Մեյնի օրինակում) և եայեցաւ և ետես—ի միջև, բայց տեսանիմ

³⁵ Մեյն, անդ, էջ 16:

բայլը մեկ կատարյալով է դրված, մեկ անկատարով, չնայած իմաստային նուրնությունը անժխտելի է:

Ուրեմն հարկ չկա կատարյալի և անկատարի զուգահեռ գործածության համար այլևայլ պատճառներ գտնել: Այդ պատճառը մեկն է՝ անցյալ անկատարը գրաբարում գործածվում է նաև անցյալ կատարյալի փոխարեն:

Բնականաբար հարց է ծագում. անցյալ անկատարն ու կատարյալը քերականական տարբեր ժամանակներ են, թե՞ տարրեր ժամանակաձևեր՝ միևնույն քերականական իմաստներով:

Համեմատենք այդ երկու ժամանակների կիրառության շրջանակները: Կատարյալի ընդգրկման սահմանները պայմանականորեն նշանակենք X -ով, իսկ անկատարինը՝ Y -ով: Եթե հաշվի առնենք միայն այն դեպքերը, երբ անկատարը հանդես է գալիս կատարյալի իմաստով, ապա՝ $X=Y$: Եվ այս դեպքում դրանք իմաստային հոմանիշներ են, բայց, ինչպես գիտենք, անկատարն արտահայտում է նաև անավարտ գործողություն (որը նրա հիմնական գործառությունն է): Եվ այդ հատկանիշով նա տարբերվում է կատարյալից: Այլ կերպ ասած, անկատարի կիրառության շրջանակները ավելի լայն են՝ $Y > X$ և $Y - X = Z$ (Z — անավարտ գործողություն): Բայց Z հատկանիշը մեզ դեռևս հիմք չի տալիս դրանք համարելու տարբեր ժամանակներ, որովհետև երկու քերականական ժամանակների մասին խոսք կարող է լինել միայն այն դեպքում, երբ նրանց միջև կա ժամանակային հաջորդականություն որևէ ժամանակակետի նկատմամբ (խոսքը, անշուշտ, միևնույն եղանակի մեջ մտնող քերականական ժամանակների մասին է), իսկ Z -ը կերպային հատկանիշ է և տշ թե ժամանակային:

Այս սոսնակյունից հետաքրքիր է համեմատել աշխարհագրի համանուն ժամանակները: Այստեղ թեև նույնպես գործ ունենք անկատարություն — կատարյալություն կերպային հակադրության հետ, սակայն մենք չենք կարող կասկածի տակ առնել անցյալ անկատարի՝ որպես առանձին քերականական ժամանակի գոյությունը, քանի որ, բացի կերպային հատկանիշից, այդ երկու ժամանակների միջև կա նաև ժամանակային հաջորդականություն: Եվ եթե այն հստակ չի երևում զբոլմ էի և զբեցի ձևերի հակադրությունից, ապա հարցը պարզ է դառնում, երբ համեմատում ենք զբոլմ եմ, զբոլմ էի ձևերը: Այստեղ եմ և էի օժանդակ բայերը կոնկրետացնում են համապատասխան ժամանակների քերականական իմաստները:

Այլ է վիճակը գրաբարում: Այստեղ ժամանակաձևերի հակադրությունը մեզ ոչինչ չի տա, որովհետև բոլորն էլ պարզ ձևվեր են:

Իսկ եթե վերցնենք զուտ իմաստային կողմը, ապա քանի որ անկատարն ու կատարյալը արտահայտում են անցյալ գործողություններ, ուրեմն գործ ունենք միևնույն անցյալ ժամանակի հետ: Հետևաբար և դրանք քերականական տարբեր ժամանակներ չեն:

Մենք անցյալ կատարյալին դեռ կանդրադառնանք մի այլ առիթով, երբ համեմատենք վաղակատարի հետ: Զրտապենք դրամաին եղրակացությունն անել, իսկ անցյալ անկատարի մասին, ելնելով ցայժմ արված եղրահանգումներից, կարող ենք ասել հետևյալը: Գրաբարի անցյալ անկատարը կարելի է չհամարել որպես առանձին քերականական ժամանակ: Այն արտահայտում է անցյալում տեղի ունեցած գործողության կերպային բնույթը: Ուրեմն այն կերպի արտահայտիչ է և ոչ թե քերականական ժամանակ: Կամ էլ անկատարն ու կատարյալը պետք է գիտել որպես միևնույն ժամանակային իմաստի արտահայտություն տարբեր ձևեր:

ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԵՎ ՎԱՂԱԿԱՏԱՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՑՈՒՆՆԵՐՆ ՈՒ
ՏԱՐԲԵՐԱԿԻՋ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Համառոտակի կանդ առնենք վաղակատարի յուրահատկությունների և այդ ժամանակի վերաբերյալ ուսումնասիրողների որոշ դիտողությունների վրա:

Վաղակատարը, ի տարբերություն կատարյալի, կազմվում է բաղադրյալ ձևով (անց. դերբայ + օժ. բայ): Ուրեմն արտահայտության պլանում այն տարբերվում է անցյալ կատարյալից³⁶:

Պետք է նշել, որ դրաբարի քերականություններում համարյա չի քննվում այդ ժամանակի էությունը, և արված մի քանի նկատառումներն ու դիտողությունները մասամբ հակասական են: Նշենք նաև, որ ոմանք վաղակատարը առհասարակ որպես քերականական ժամանակ չեն ընդգնում: Այդ տեսակետը առաջին անգամ հայտնել է Գ. Ավետիքյանը: Դրանց առանձին ժամանակներ չլինելը հեղինակը հիմնավորում է երկու բանով. ա) որ էական բայը կարող է ետ և առաջ դրվել, բ) որ դերբայը կարող է ստանալ հոգնակիակերտ և մասնիկը³⁷:

³⁶ Այդ ժամանակ քերականները կոչում են տարբեր անուններով: Մենք միշտ կկոչենք վաղակատար, իսկ դերբայ + օժ. բայի անցյալի ձևերով կազմված ժամանակը՝ անցյալի վաղակատար կամ վաղակատար անցյալ:

³⁷ Կ. Ավետիքյան. Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 287:

Վաղակատարի գոյության հարցը կասկածի տակ է դնում նաև ի. Շիլակաձեն³⁸, նրա փաստարկները սրանք են՝ ա) անցյալ դերբայի ձևը գործածվում է նաև անվանաբար (գոյական, ածական). բ) դա գործածվում է նաև արսողուտիվ (депричастие) նշանակությամբ. դ) այդ դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերի բովանդակությունները չափազանց շատ են. դ) այդ բովանդակություններն իրարից շատ հեռու են. ե) դժվար է ասել, թե այդ բովանդակություններից ո՞րն է գլխավորը, ո՞րը երկրորդականը. զ) գրաբարը սինթետիկ լեզու է, բոլոր բայաշարքերը կազմվում են սինթետիկ ձևով, անալիտիկ կերպով կազմված բայաշարքեր դրաբարում քոլորովին չկան, և այդպես կազմված ձևերը կիսախտեին գրաբարի սխտեմը, և վերջապես՝ է) աշխարհագրորդի շտեմածի, ճախորդի և առատիկ շարքերի ձևերին գրաբարում հաճախ համապատասխանում ան զանազան բայաձևեր և ոչ միայն դերբայով և օժանդակ բայով կազմված ձևեր³⁹:

Ի՞նչ կարելի է ասել այս փաստարկների մասին:

Գ. Ավետիքյանի փաստարկները հիմք չեն տալիս ժխտելու վաղակատարի քերականական ժամանակ լինելը, որովհետև ինչպես օժանդակ բայի ետևադույթունը, այնպես էլ դերբայի հոգնակիակերտ մասնիկ ստանալը չեն փոխում (գերբայ + օժ. բայ) կազմության ժամանակային իմաստը: Օրինակ՝ Ի սկզբան ի նախնեացն հետէ զձեր Արշակունեաց տոհմին Մամիկոնէից է կորուսեալ (Բուդ., 5, ԼԵ, 352): Վասն այնր եմք գնացեալք (անդ, ԼԷ, 362): Քեզէն իսկ ասացէր բաս յերկրէն յաշխարհէն ճենաց եմք լեալք թագաւորք ի բնութենէ և այսր պանդուխտ եմք եկեալք (անդ, 360—361):

Բերված օրինակներում՝ է կորուսեալ = կորուսեալ է, իսկ գնացեալք եմք = գնացեալ եմք (գնացել ենք): Ոչ մի դեպքում նշված հատկանիշները որևէ իմաստային փոփոխություն չեն մտցնում: Այլ կերպ ասած՝ արտահայտության պլանում կատարված փոփոխությունները բովանդակության պլանի վրա չեն ազդում: Եվ այդ ձևերը համարժեք իմաստային ձևեր են:

Նույնը կարելի է ասել և Շիլակաձեի փաստարկների մասին: Բայց, որովհետև նրանք ավելի կոնկրետացնող դեպքեր են, համառոտակի կանգ առնենք դրանց վրա:

³⁸ Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կառուցողականները, Լեզվի և ոճի հարցեր, հ. 2, Երևան, 1964:

³⁹ Անդ, ԼԶ 260:

Փաստարկների ա, բ, գ, դ, ե կետերը վերաբերում են դերբայի գործածությանը և կապ չունեն վաղակատար ժամանակի հետ: Վերջինիս առանձին ժամանակ լինելու հարցը քննելիս պետք է հենվել ոչ թե նրա առանձին բաղադրիչների յուրահատկությունների վրա, այլ այդ բաղադրիչները դիտել որպես մի օրգանական միասնություն, որովհետև վաղակատարը սույն դերբայի և օժանդակ բայի մեխանիկական գումար չէ: Այն հոր որակ է՝ նոր ձևի մեջ: Ինչ վերաբերում է զ կետին, ապա կարող ենք ասել, որ եթե բայաշարքերը (ըստ հեղինակի գործած տերմինի) գրաբարում կազմվում են համագրական ձևով, ապա դա չի բացառում անալիտիկ ձևերի գոյությունը (աշխարհաբարը դրա փայլուն ապացույցն է): «Անալիտիկ կերպով կազմված ձևերը կիսախտին գրաբարի տիպ-տեմը», — ավելացնում է հեղինակը: Դուրս է գալիս, որ լեզուն պարտադրվում է համակարգին, և վերջինս է որոշում լեզվի կազմությունը: Եվ եթե համակարգին հակասող փաստեր կան, ուրեմն դրանք խորթ են լեզվին. «Ավելի վատ փաստերի համար»:

Հեղինակի վերջին փաստարկին մենք չենք անդրադառնա, որովհետև այն նույնպես կապ չունի քննարկվող հարցի հետ և մյուս կողմից էլ հարց է, ընդունելի է արդյո՞ք նրա, և նախքան այդ, Շանիձեի կողմից առաջ քաշված քերականական նորանոր կարգերի տեսությունը: Իսկ վերջինիս անդրադառնալը մեր նպատակից դուրս է:

Նշենք նաև, որ որոշ դեպքերում գրաբարից բերած նրա օրինակները չեն համապատասխանում իրողությանը: Այսպես, անցյալ դերբայի՝ դիմավոր բայի նշանակությամբ գործածությունը ապացուցելու համար նա բերում է հետևյալ օրինակները՝ Եւ ճայեցեալ ընդ Յիսուսի զի գնայր և ասէ, ահաւասիկ Քրիստոս գառն Աստծոյ: Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ի Հրեաստանէ ի Գաղիեա⁴⁰: Սակայն այստեղ, ինչպես և մյուս 6 օրինակներում, դերբայը հանդես է դալիս հենց դերբայական կիրառությամբ. Եւ ճայեալ զնացող Հիսոսին... և այլն:

Անկախ այլևայլ կարծիքներից, առարկայորեն գոյություն ունի վաղակատարի ժամանակաձևը, և եթե կա ձևը, ապա անհրաժեշտ է ցույց տալ նաև այդ ժամանակի իմաստային յուրահատկությունները: Բնականաբար, վաղակատարը առաջին հերթին պետք է համեմատենք անցյալ կատարյալի հետ: Երկուսն էլ հիմնական կեր-

40 Անդ, էջ 260—261:

պային հատկանիշներով նույնական են: Եվ եթե դրանց միջև չլինեն տարբերակիչ հատկանիշներ, ուրեմն դրանք առանձին ժամանակներ չեն: Բայց այդպիսի հատկանիշներ կան: Վաղակատարի դեպքում, ի տարբերություն անցյալ կատարյալի, գործողությունը հադարձում է ներկա ժամանակակետին (այդ հարաբերությունը կոնկրետանում է օժանդակ բայերի միջոցով՝ եմ, ես, է...):

Առհասարակ վաղակատարի գործածության ժամանակ ակնառու է կապը ներկայի հետ:

Ֆրանսիացի լեզվաբան Լիոնեն գրաբարի վաղակատարի կիրառությունը տեսնում է այնտեղ, որտեղ արտահայտված է վիճակ կամ այնպիսի գործողություն, որի արդյունքը մնում է⁴¹:

Եիշտ է, նշվածները վաղակատարի կիրառության հիմնական ոլորտներն են, բայց ոչ միակը: Օրինակ՝ Վարդապետ եկեալ է և կոչ է գրեզ (Յով., ԺԱ, 28): Արդ վասն այնորիկ քողեալ է Աստուծոյ զստանալ (Եզն., 58):

Այս և նման օրինակներում վաղակատարը ոչ վիճակ, ոչ էլ գործողության հարատևող արդյունք է արտահայտում, այն մատնանշում է ավարտված գործողություն (ինչպես անցյալ կատարյալը)՝ առանց ուշադրություն դարձնելու գործողության արդյունքի վրա:

Ինչ վերաբերում է վաղակատար անցյալին (գրեալ էի), ապա վերջինիս մատնանշած գործողությունը նախորդում է մի այլ գործողության և հարաբերում ոչ թե ներկա, այլ այդ ներկայի համեմատությամբ մի անցյալ ժամանակակետի: Ուրեմն վաղակատարի և անցյալ վաղակատարի միջև առկա է և ժամանակային հաջորդականություն: Հետևաբար, ավելորդ է կասկածի տակ առնել դրանց ինքնուրույն քերականական ժամանակներ լինելու հարցը:

Արդեն խոսել ենք անցյալ անկատարի մասին: Հարց է առաջանում, արդյո՞ք առանձին քերականական ժամանակ է անցյալ կատարյալը: Դիմենք ժամանակաձևերի հակադրությանը: Գրէի և գրեցի ձևերի հակադրությունից պարզվում է անցյալ կատարյալի կերպային բնույթը, իսկ գրեցի և գրեալ եմ հակադրությունից ի հայտ է գալիս նրա ժամանակային իմաստի տարբերակիչ յուրահատկությունը: Ի տարբերություն վաղակատարի, անցյալ կատարյալի արտահայտած գործողությունը հարաբերում է մի որևէ անցյալ ժամանակակետի, որը ներկայի համեմատությամբ կոնկրետ

41 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1935, № № 5—7:

տացված չէ։ Այն անորոշ է, եւ վեթե նշված ժամանակը անվանելու չլինենք կերպային հատկանիշով՝ (կատարյալ), ապա, թվում է, ճիշտ կլինի կոչել անորոշ անցյալ։

* * *

Գրաբարի բայական ժամանակները որոշ հատկանիշներով տարբերվում են աշխարհաբարի համապատասխան ժամանակներից։ Առաջին հերթին նշենք, որ գրաբարյան վաղակատարը դասական շրջանում սահմանափակ կիրառություն ունի։ Այդ են վկայում նաև մեր կատարած որոշ հաշվումները։ Ղուկասի ավետարանի Ա—Գ հատվածներում անցյալ կատարյալի հանդիպում ենք 141 անգամ, իսկ վաղակատարի՝ 11 անգամ, Մարկոսի ավետարանում վաղակատար գործածված է 16 անգամ, Բուդանդի պատմության 4-րդ գլուխում մեջ (որը ի դեպ այդ գրքի ամենամեծ բաժինն է) վաղակատար գործածված է 21 անգամ, իսկ Եզնիկի գրքի «Եղծ աղանդոց հեթանոսացն» բաժնում՝ 18։

Աշխարհաբարի անցյալ կատարյալ և վաղակատար ժամանակների յուրահատկությունների մասին Ս. Աբրահամյանը գրում է. «Գնացել է և գնաց ձեռքի հակադրության մեջ գնաց-ը նշում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ, կամ մտածվելը որպես այդպիսին»։ «Անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային նշված յուրահատկության մասին է խոսում նաև ժամանակային տարբեր իմաստ ունեցող բառերի ու բառակապակցությունների կապակցելիության յուրահատկությունը։ Խոսքը վերաբերում է այն երևույթին, որ խոսելու պահին անմիջապես նախորդող կամ համեմատյան դեպս համեմատաբար մոտ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (հենց նոր, այս պահին, այս րոպեին և այլն) գործածվում են անցյալ կատարյալի հետ, փսկ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (վաղուց, շատ առաջ, առաջ և այլն)՝ վաղակատար ժամանակի հետ»⁴²։

Գրաբարում, ընդհակառակը, կատարյալի և վաղակատարի միջև այդ նրբությունը չի գիտակցվում։ Օրինակ՝ Մեռալ դուստրն քո (Ղուկ., Ը, 49)։ Գործողությունը վաղուց է կատարվել (դա երեւում է հատկապես բնագրից), բայց հեղինակը այն ներկայացնում է կատարյալով

⁴² Ս. Դ. Աբրահամյան, ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 174։

Կամ՝ Մեք ի վաղուց ճեռել գիտացաք զեկեալ փրկութիւն աշխարհի (Վրք., հրնց., 3), Ի վաղուց ճեռել իմացայ զքեզ, եղբայր իմ, եթէ ի տեղիս յայսոսիկ բնակեալ ես զոր և խոստացաւ ինձ Քրիստոս ածել ի ծանօթութիւն (անդ, 11): Որ այս օրինակներում գործողութիւնները նոր չեն կատարվել, ցույց է տալիս ի վաղուց ճեռել մակբայը, բայց, չնայած դրան, գործողութիւնները արտահայտված են անցյալ կատարյալով և ոչ թե վաղակատարով:

Կամ՝ Իբրեւ գիտաց Յիսուս եթէ լուան փարիսեցիքն, եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և մկրտէ քան զՀովհաննէս... (Յովհ., Դ, 1), Եւ ետես Դավիթ զտեղին ուր ննշեաց Սաւուղ (Թագ., 1, ԻԶ, 5): Ապա նոքա ընդ միաբերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, զքեզ շիշխեցաք ասել (Բուդ., 4, 20Ը): Այստեղ անխտիր գործածված է անցյալ կատարյալ. աշխարհաբարում, անշուշտ, ավելի վաղ կատարված գործողութիւնները կգրվին վաղակատարով:

Գրաբարի անցյալ կատարյալը, ինչպես տեսանք, ունի արդի հայերենի վաղակատարին բնորոշ որոշ յուրահատկութիւններ:

Այն կարող է արտահայտել նաև վաղակատար անցյալի իմաստ:

Ղուկասի ավետարանի Ա—Դ հատվածներում գործածված 141 կատարյալներից աշխարհաբար թարգմանության մեջ վաղակատար է ներկայացված 2, իսկ անցյալի վաղակատար՝ 12 անգամ: Հովհաննէսի ավետարանում՝ համապատասխանաբար 35 և 12⁴³, Ուրեմն, գրաբարում անցյալ կատարյալը բուն և երկրորդական կիրառութեան ավելի լայն տիրույթ է ընդգրկում աշխարհաբարի համանուն ժամանակի համեմատութեամբ: Իսկ ինչ վերաբերում է գրաբարյան վաղակատարին, ապա վերջինս աշխարհաբարի վաղակատարի համեմատութեամբ գործառական-իմաստային ավելի նեղ շրջանակներ է ընդգրկում: Այս և քանակական տեսակետից նրա սահմանափակ կիրառութիւնը հիմք են տալիս ենթադրելու, որ դասական շրջանում վաղակատարը ավելի շատ քաղաքային կամ թերևս բանավոր խոսքին բնորոշ գործածութիւն ունեն, իսկ գրավոր լեզվում հիմնավոր կիրառութիւն ստացավ ավելի ուշ շրջանում:

43 Տե՛ս նոր կտակարան: Զորս ավետարաններ և գործք առաքելոց, էջմիածին, 1969:

**ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌԵՆԵՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ
ԳՐԱՐԱՐՈՒՄ**

Գրաբարում ապառնի ժամանակի իմաստն արտահայտվում է հիմնականում երեք ժամանակաձևերի միջոցով, որից երկուսը պարզ ժամանակներ են (առաջին և երկրորդ ապառնիներ), իսկ մյուսը՝ բաղադրյալ (կազմված ապառնի դերբայով և օժանդակ բայով՝ գրելոց եմ):

Դժվար չէ հստակորեն սահմանադատել բաղադրյալ և պարզ ձևերի հակադրության սահմանները: Նույնը շենք կարող ասել, սակայն, առաջին և երկրորդ ապառնիների մասին: Ամենաընդհանուր ձևով նշվում է, որ առաջին և երկրորդ ապառնին համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, իսկ երկրորդը կատարում է նաև աշխարհաբարի սահմանափակ եղանակի ապառնու գործառնություն: Այստեղ, իհարկե, առարկելու ոչինչ չկա, բայց այսպիսի ընդհանուր դիտողությունը դեռևս լրիվ չի բացահայտում նշված ժամանակների յուրահատկությունները, նամանավանդ, որ նման մոտեցմամբ դրանք քննվում են ոչ թե գրաբարի բայական համակարգում, այլ տրպես համեմատության եզր է ընդունվում աշխարհաբարը: Չեն բացահայտվում նաև դրանց կերպային, եղանակային բնույթը, գործառական առանձնահատուկ կողմերը:

Հարկ է նշել, որ եթե կերպի հարցը առհասարակ քննության չի առնված գրաբարի ուսումնասիրողների կողմից, ապա եղանակների և հատկապես առաջին և երկրորդ ապառնիների եղանակային բնույթի հարցում գրաբարի ուսումնասիրողները միակամբ չեն:

Ոմանք (Չամչյան, Բագրատունի, Չալիխյան, Այտընյան և այլք) առաջին ապառնին համարում են ստորադասական եղանակի, իսկ երկրորդը՝ սահմանական եղանակի ժամանակներ⁴⁴, Աբեղյանը իր «Գրաբարի համառոտ քերականություն» (1907), գրքում ասպառնիները տեղադրում է սահմանական եղանակի մեջ, առաջին ասպառնու մոտ փակագծերում նշելով՝ ստորադասական: Իսկ 1936 թ. լույս տեսած «Գրաբարի քերականություն» մեջ նշված ժամանակները տեղադրված են ստորադասական եղանակի մեջ:

⁴⁴ Տե՛ս նշված հեղինակների աշխատություններում բայերի խոնարհման տախտակները:

Առաջին և երկրորդ ապառնիները ստորագրասական եղանակի ժամանակներ է համարում նաև Ա. Աբրահամյանը⁴⁵։

Խնչ է ցույց տալիս ստորագրասական եղանակը, որն է նրա էությունը։ Բազրատունին այն սահմանում է ախպես. «Որ ընդ պայմանաւ իմն և ի կախ ընդ այլով թողու զբանն... (զի, թէ, եթէ) գնայցեմ»⁴⁶։ Չալըխյան—Այտընյանի քերականության մեջ կարդում ենք. «Երկու գլխավոր եղանակները, սահմանականն ու ստորագրասականն առով իրարմէ կը տարբերին, որ առաջինն անկախ է, կը սահմանէ, կորոշէ հաստատելով կամ յորանալով, իսկ երկրորդը անորոշ կը խօսի հասարակօրէն ուրիշ բայի կախմամբ, պայմանաւ թէութեամբ և այլն» (էջ 365)։

Մոտավորապես նույն ձևով է սահմանում նաև Ստ. Մալխասյանը⁴⁷։

Ստորագրասականը, ըստ Աճառյանի, հին ըղձականն է⁴⁸ (իմա՝ հնդեվրոպերենի—Վ. Հ.)։ Ըստ Ա. Աբրահամյանի՝ ստորագրասականը ենթադրում է արգի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակները⁴⁹։

Այդ եղանակի էությունը բացահայտելու նպատակով քննենք ապառնիների կիրառական առանձնահատկությունները։

Գրաբարի ուսումնասիրողները այս կամ այն առիթով անդրադարձել են այդ երկու ժամանակների կիրառությանը։ Առավել մանրամասն նշված են հատկապես առաջին ապառնու կիրառության ոլորտները։ Ուստի մենք նպատակահարմար գտանք երկու ապառնիների գործածության համադրության միջոցով ցույց տալ այն դեպքերը, որոնք բնորոշ են երկու ժամանակներին էլ և կիրառության այն ոլորտները, որտեղ նրանք հակադրվում են։

Նկատված է, որ արդեն նույնիսկ դասական շրջանում խախտված են նշված երկու ապառնիների կիրառության սահմանները։ Օրինակ՝ Զի այնպէս անցցես ընդ ջուրն օտար եւ անցանիցես ընդ գետն օտարական (Առակք, Թ, 18)։ Պաամեսցես դու որգւոյն քում և ասիցես (Յեսու, Դ, 6)։ Յորժամ նախաաիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան շար սուտ զձէնջ վասն իմ (Ագաթ., Ժէ, 154)։ Վասն այնորիկ ասացի թէ յիմմէ անտի առնուցու և

45 Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 109։

46 Ա. Բագրատունի, Քերականութիւն ի պէտս զարգացելոց, էջ 131։

47 Ստ. Մալխասյան, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 24։

48 Հ. Աճառյան, ՀՔՀԼ, հ. 4, Ա, 1959, Երևան, էջ 363։

49 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 109։

պատմեցէ (անդ, Ղէ, 529), Եւ այնպէս շանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարութք ակնկալութենէ վրիպեցուցէ և ի սնոտի յոյս կապիցէ (Եզն., 105), Զդեւս հանիցեն և օձս ի ձեռն առցեն (անդ, 89), Ո՞վ պարծեցի սիրտ սուրբ ունել, կամ ով համարձակիցի եթէ սուրբ իցէ ի մեղաց (Առակք, Ի, 9):

Նման օրինակներ կարելի է շատ բերել, սրանք առկա են բոլոր հեղինակների երկերում, ընդ որում, ինչպես նկատվում է, այսպիսի խառն գործածությունը բնորոշ չէ միայն այս կամ այն բրնույթի ու կազմութեան նախադասություններին կամ ոճերին, այլ համընդհանուր տարածում ունի:

Ըստ ոմանց (Ավետիքյան, Զալրիսյան, Ախտընյան, Թոռնյան) զի, ուր, յորժամ, եթէ, թէ բառերից հետո հիմնականում դրվում է առաջին ապառնի:

Բայց պետք է ասել, որ, իրականում, այսպիսի դեպքերում հավասարապես դրվում է նաև երկրորդ ապառնի: Կարելի է օրինակներ բերել ամենատարբեր բնույթի գործերից ու տարբեր հեղինակներից. Զի յարիցէ զնացէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին պարսից Շապհոյ (Բուդ., IV, 249), Որ տեսցէ զորդի և հաւատացէ ի նա, ընկալցի զկեանս յաւիտենից (Եզն., 171), Յորժամ ահագին երեւեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն (անդ, 105), Եւ եթէ ի դրացւոյ և ի բարեկամէ թշնամանեսցի, մի փոխարէն թշնամանեսցէ, այլ առավել արգահատեսցէ ևս (անդ, 60), Յորժամ ձերաւացիս, ձեռս ի վեր կալցես և այլք ածցեն քեզ գօտի... (Յովհ., ԻԱ, 18), Ասա ինձ ուր եդիր զնա, ես առից (անդ, Ի, 15), Արդ՝ եթե յանկարծ ոք թէ գացի, որ զդիսն անպատուեսցէ և գտցեն այնպիսին, կապեալ ոտիւք և կապեալ ձեռքք ի դուռն արքունի ածցեն (անդ, ԺԲ, 109):

Նշված բառերի հետ ապառնիների գործածության վերաբերյալ կատարել ենք որոշ հաշվումներ: Եզնիկի աշխատության 4-րդ զրրքի, Բուզանդի Պատմության 3-րդ դպրության, Ագաթանգեղոսի գրքի Ա—Ի գլուխներում և Յովհաննեսի ավետարանում գի, ուր, ուր, եթէ, յորժամ բառերից հետո առաջին և երկրորդ ապառնիների գործածության քանակական պատկերը հետևյալն է (տե՛ս էջ 302):

Այս աղյուսակում նշված թվերը (որոնք ապառնիների գործածության դեպքերն են) մոտավոր լինելու դեպքում էլ վկայում են այն մասին, որ նշված բառերի հետ ավելի շատ գործածվում է երկրորդ ապառնին, քան առաջինը, մի բան, որ հակառակն է ներկայացված ուսումնասիրողների կողմից:

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ հեռախոսային հարցման դեպքում գրվում է առաջին ապառնի:

Փաստերը ցույց են տալիս, սակայն, որ հիշյալ դեպքում հաճախ օգտագործվում է նաև երկրորդ ապառնի: Օրինակ՝ Ով լիցի վստահ ի քեզ ծով, ի յուզել ալեացդ և ի մրրկել զբաւանացդ: Ով ճավառացել քեզ աշխարհ ի վառել քարկոթեանդ (Վկայք, 53): Ապա եթե ի յոռի ինչ դարձան, իշխեսցեն ասել՝ թէ շարեացն պատճառ Աստուած է (Եզն., 30):

	Առաջին ապառնի				Երկրորդ ապառնի			
	Եզն.	Բուզ.	Ազաթ.	Հովհ.	Եզն.	Բուզ.	Ազաթ.	Հովհ.
Չի, որ,	7	5	11	13	3	29	69	54
Եթէ, յոր-ժամ	14	3	8	19	2	3	22	22

Ավանդաբար երկրայական խոսքում նույնպես բնորոշ է համարվում առաջին ապառնու կիրառությունը (Բագրատունի, Չալըխյան, Մալխասյան, Արեգյան): Քանի որ թեական, երկրայական խոսքերը հաճախ ուղեկցվում են գուցե, քերես և նման բառերով, ուստի քերականները առաջին ապառնու կիրառության դեպքերից մեկը համարում են նշված բառերի հետ նրա գործածությունը:

Բայց նման դիրքում դարձյալ կիրառվում է նաև երկրորդ ապառնի. Զի գուցե քէ յանկարծ ոք զդիսն անգոսնեսցէ (Ազաթ., 103): Խնդրէր ի նմանէ, զի մատուցէ աղօթս վասն նորա, զի մի գուցէ և նա սատակեսցի, քանզի կարի զարհուրեալ էր (Բուզ., 174): Քերես հասակ իմ ծերացի և իբրեւ զծառ արմատոյ բազում ժամանակս կեսից (Յոր., ԻԹ, 18): Քերես գլխոց փրկանս գտանել, ի պարտուց զանձինս թափել կաւացեն (Ազաթ., 8), Իսկ նա ետ պատասխանի և ասէ. հնգետասան օր յետ բանիցն եղելոյ, երկարեաց Քրիստոս, քերես դարձրիք (Բուզ., 136):

Ա. Այտընյանը ամենաընդհանուր ձևով նշում է ստորադասության երկու դեպք (375). ա) նախընթացի հետ կապված ստորադասություն, որի մասին արդեն նշել ենք և բ) ճիշդնակաց ստորադասական՝ նախընթաց բառ է անկախ: Այս վերջինում նա ա-

ռանձնացնում է առաջին ապառնու գործածության շորս կոնկրետ դեպք: Երկուսի մասին արդեն նշել ենք (թեոթյուն, երկրայություն) և ցույց տվել, որ այս դեպքում հանդես էլ գալիս նաև երկրորդ ապառնին: Մյուս դեպքերն են, ըստ Այտընյանի, «հարցումն և ուրիշի կարծածն ու ըսածը» (378): Փաստերը ցույց են տալիս, սակայն, որ հարցման դեպքում կիրառվում է նաև երկրորդ ապառնի, և թվում է, թե ոչ մի հիմք չկա գործածության նշված ուղորդը բնորոշ համարել միայն առաջին ապառնուն: Օրինակ՝ Տեսցուք քո Աստուածն, զի՞ արասցէ (Ագաթ., Ժ, 100): Արդ արասցեն՝ ողկամս իմ (անդ, 91): Արդեօ՞ք տացես դու զգաստութիւնդ քո սըրբութեանդ կերակուր շանց յայսմիկ ի բարբարոս աշխարհիս (անդ, 193): Եւ զհնձեալսն և զհատեալսն զի՞նչ արասցեն (անդ, 474): Ի՞նչ կեցցուի այսչափ անշավի զօրաց բազմութիւնք (Բուդ., 20):

Ինչ մնում է հեղինակի մյուս փաստարկին՝ «ուրիշի կարծածն ու ըսածը», ապա փաստորեն խոսքը այստեղ վերաբերում է ուրիշի ուղղակի խոսքին: Եթե այն ապառնիություն է արտահայտում, ապա կարող է գրված լինել այդ ժամանակի իմաստը արտահայտող ցանկացած ժամանակաձևով:

Մ. Արեղյանը խոսելով ստորագասական եղանակի մասին (ոչ թե գրաբարի, այլ ընդհանրապես որպես քերականական կարգի), նշում է. «Ստորագասական եղանակը կազմում է ոչ թէ գլխավոր կամ անկախ խոսք, այլ երկրորդական խոսք»⁵⁰:

Փաստերը ցույց են տալիս, որ գրաբարում առաջին ապառնին, որը դիտվում է ստորագասական ապառնի, իրոք հանդես է գալիս երկրորդական նախադասության մեջ:

Սակայն երկրորդական նախադասության մեջ հանդիպում ենք նաև երկրորդ ապառնու ինչպես՝ Ած յայտ զարարածս, զի իւր կարողութիւնն երեւեսցի և արարածքն ի նորա բարբարութեանն վայելեսցեն (Եզն., 238): Տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ Արշակ արքայ Հայոց (Բուդ., 309): Այլ և զայս խօսեցայ ընդ, ձեզ, յի յորժամ եկեսցէ ժամանակ. յիշեցէք թէ ես ասացի ձեզ (Յովհ., ԺԶ, 9):

Ապառնիները չեն հակադրվում նաև այս կամ այն բնույթի երկրորդական նախադասության մեջ կիրառվելիս:

Նշված ժամանակները հավասարապես գործածվում են նաև

50 Մ. Արեղյան, Բայի եղանակները արևելյան աշխարհարարում («Արարատ», 1912, № 2, 3):

դիտարկող նախադասության մեջ: Օրինակ՝ Զի ուր հան իցեմ, և դու՛ր
անդ իցէ՛ք (Յովհ., ԺԴ, 3): Թե կայցեք յիս, եւ բանքն իմ ի ձեզ
կայցեն (անդ, ԺԵ, 7): Խնդրեցումք ի Քրիստոսէ տեառնէ մերմէ,
զի թողցէ զմեզս անհաւատութեան հերձուածողութեանն և ողորմի
(Բուդ., 126): Եւ մեք տօնս արացումք և ուրախ լիցուք, զի աստուած
այսոքիւք հաճեցցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհե-
ցէ (անդ, 43):

Քանի որ անդրադարձել ենք առաջին և երկրորդ ապառնիւնների
կիրառությանը բարդ ստորադասական նախադասության մեջ, ա-
պա նշենք նաև, որ այդ ժամանակները հանդես են գալիս ինչպես
համաստորադաս, այնպես էլ երկրորդական բնույթի երկրորդական
նախադասություններում:

Ուրեմն, բարդ ստորադասական նախադասության մեջ հավա-
սարապես գործածվում են թե՛ առաջին, թե՛ երկրորդ ապառնիւն-
քը: Խոսքը, իհարկե, քանակական հավասարության մասին չէ, որը
տվյալ դեպքում վարկեր էլ չէ, ալ այն, որ բարդ ստորադասական
նախադասության մեջ նշված ժամանակները գործառական հակա-
դրություն չունեն:

Այժմ անցնենք դրանց քննությանը բարդ համադասական նա-
խադասության մեջ:

Հանդիպում են բազմաթիվ օրինակներ, երբ բարդ համադա-
սական նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասու-
թյուններում հանդես է գալիս երկրորդ ապառնիւն: Այսպես՝
Ամենքին եկեցեն ի վերայ քո լի հիւսիսոյ, կառք և անիւք ազ-
գաց բազմութեան և արկցեն շուրջ զքեւ պահ և տաց առաջի երե-
սաց նոցա դատաստանս և խնդրեցեն ի քէն վրէժս դատաս-
տանօք իւրեանց և տաց զնախանձ իմ ի քեզ և արացեն ընդ քեզ
ըստ բարկութեան սրտմտութեան իմոյ և զունչս և զականջս քո
կտրեցեն... (Նզեկ., ԻԶ, 24): Մաանեսչիք իբրեւ զհօտ ի ձեռս
գազանաց և անկջիք ի փառաց (Բուդ., 65):

Նման կիրառության հանդիպում ենք նաև արգելական և հար-
ցական նախադասություններում: Առանձնացնելով կիրառության
այս տվյալը՝ մենք վարվում ենք որոշ ուսումնասիրողների նման,
սակայն եթե վերջիններս այդ անում են՝ ստորադասության յուրա-
տեսակ արտահայտություն տեսնելով հարցման ու արգելման մեջ
(մի բան, որը ընդունելի է խիստ վերապահությամբ), մենք այդ
առանձնացումը կատարում ենք միայն ու միայն նշված ժամա-

նակների կիրառական առանձնահատկությունների բացահայտ-
ման միտումով: Օրինակ՝ Ե. արդ զիարդ լոնսցուֆ և ոչ ճսոնսցուֆ
և ուր երևեսցի մեր մտերմութիւն (Սերբեր., ճառ, 1): Աստեղքն երկ-
նից՝ Հայկին հանդերձ և ամենայն զարդուն երկնից լոյս մի տացեն
և իսովարեսցի արեգակն ի ծագել իւրում և լուսին մի տացէ զլոյս
իւր (Եսայի, ԺԳ, 11): Եւ ոչ բնակեսցէ յաւիտեանս ժամանակաց և
մի մտցեն ի նա յազգս բազումս և մի ևս անցցեն ընդ նա արարա-
ցիք և հովիւք մի հանգիցեն ի նմա (անգ, ԺԳ, 20):

Արգելական և հարցական նախադասութիւններում բնականա-
բար գործածվում է նաև առաջին ապառնին:

Ինչ վերաբերում է բարդ համադասական նախադասության
մեջ առաջին ապառնու այսպես կոչված «անկախ» կիրառությանը
(պատմողական ձևով՝ առանց հարցականի կամ արգելականի), ա-
պա այստեղ արդեն մեր մատենագրութիւնը այդ գործածութիւնը
հիմնավորելու նյութ չի տալիս:

Իհարկե, հանդիպում են սակավաթիվ օրինակներ, երբ բարդ
համադասական նախադասության մեջ (ոչ հարցական կամ արգե-
լական) հանգես է գալիս առաջին ապառնին: Բայց այն կիրառվում
է բարդ նախադասության կազմի մեջ մտնող ոչ բոլոր պարզ նա-
խադասութիւններում. Եւ տրտմեսցին ձկնորսքն եւ յոգոց ճանի-
ցեն ամենայն կարթնկէցք գետոյն և ցանցորդքն և ուղկանաւոր-
քն սուդ առցեն (Եսայի, ԺԹ, 8):

Ուրեմն բարդ համադասական նախադասության մեջ առաջին
և երկրորդ ապառնիները ունեն կիրառության որոշակի սահման-
ներ, ընդ որում, երկրորդ ապառնու համար կիրառության շրջա-
նակները ավելի լայն են, որովհետեւ վերջինս հանդես է գալիս նաև
պատմողական բնույթի նախադասութիւններում՝ հակադրվելով ա-
ռաջին ապառնուն:

Այդպես է վիճակը նաև պարզ նախադասության մեջ:

Փաստերը ցույց են տալիս, որ պարզ նախադասության մեջ
դասական զրաբարում կարող են գործածվել ինչպես առաջին, այն-
պես էլ երկրորդ ապառնի ժամանակները: Սակայն ինչպես բարդ
համադասական նախադասության մեջ, այնպես էլ այստեղ, առա-
ջին ապառնին հանդես է գալիս հատկապես հարցական և արգե-
լական նախադասութիւններում: Օրինակ՝ Զի՞նչ հաղորդ իցէ պոյ-
տըն ընդ կաթսայի (Սիրաք, ԺԳ, 2): Մինչև ե՞րբ անսայցեմ ձեզ
(Մտթ., Ժ, 12): Ուտիցի՞ հաց առանց աղի (Յովհ., 46): Ընդ ում
խորհրդակից լինիցի՞ (Յոթ., ԻԶ, 2): Մի վկայիցես զընկերէ քումմէ
վկայութիւն սուտ (2-րդ օրենք, Ե, 19):

ի հակադրություն վերագրելի, դասական մատենագրության մեջ պատմողական բնույթի (որը կարելի է անվանել անկախ) նախադասություններում դրվում է միայն երկրորդ ապառնի օրինակ՝ Եւ իջցես յառաջ քան զիս ի Գաղգազա (Թագ., 1, Ժ, 8), Թողալ լիցին քեզ մեղք քո (Մաթ., Թ, 2), Տաց քեզ զփականս արքայութեան երկնից (Մաթ., ԺԶ, 18), Ելցեն անիծիւք ի ժառանգութենէ քումմէ յերկնից (Վկայք., 75) և այլն, Նշենք, որ երկրորդ ապառնին հանդես է դալիս ինչպես հարցական, այնպես էլ արգելական նախադասություններում, Օրինակ՝ Զի՞նչ արասցուք (Յովհ., ԺԱ, 7), Վարդապետ, զի՞նչ գործեսցուք (Ղուկ., Գ, 12), Ո՞ւմ նմանեսցուք զարքայութիւնն Աստուծոյ (Մարկ., Դ, 30), Մի՛ որ մեռցի յաւուր յայսմիկ (Թագ., 1, ԺԱ, 13), Մի՛ տք օտար ճալորդեսցէ քեզ (Առակք, Ե, 17), Մի՛ դիցէ տէր իմ զսիրտ իւր ի վերայ առն ժանտի Նարաղայ (Թագ., 1, ԻԵ, 25)։

Հայտնի է, որ երկրորդ ապառնին, ի հակադրություն առաջին ապառնու, ունի նաև սահմանական եղանակի ապառնու գործառություն, Այսպես՝ Ես մկրտեցի զձեզ ջրով և նա մկրտեսցէ զձեզ հոգով սրբով (Մարկ., 8), Ես փառաւոր արարի և դարձեալ փառաւոր արարից (Յովհ., ԺԲ, 28), Ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից։ Ընդգծված բայերը կարող ենք թարգմանել մկրտելու եմ, անելու եմ, ծանուցանելու եմ, բայց սխալ չէր լինի, եթե թարգմանենք նաև՝ Ես մկրտեցի ձեզ ջրով, և նա կմկրտի ձեզ սուրբ հոգով, Փառավոր արի (ստեղծեցի) և դարձյալ փառավոր կանեմ։

Հետևաբար, երբ խոսվում է երկրորդ ապառնու՝ սահմանական եղանակի իմաստով գործածության մասին, ապա կարևորն այն չէ, թե երկրորդ ապառնին աշխարհաբարի ո՞ր եղանակա-ժամանակային ձևին է համապատասխանում, այլ այն, որ նշված գործողությունը դիտվում է որպես ստույգ կատարվելիք (կամ ըստույգ ժխտվող) գործողություն։

Ավարտելով երկու ապառնիների կիրառական յուրահատկությունների քննությունը, կարող ենք որոշ եզրակացությունների հանգել։

1. Ինչպես նկատելի է, դասական գրաբարում երկու ապառնիների միջև իմաստային խոր հակադրություն չկա։

2. Ամենայն հավանականությամբ, այդպիսի հակադրություն եղել է նախադասական շրջանում։ Դժվար է, միաժամանակ մեր նպատակից դուրս, կոնկրետ մատնանշել այդ ժամանակաշրջանը, բայց այս ենթադրությունը ամուսնանք այն պատճառով, որ երկու

ապառնինների դոկտորությունը աննպատակ լինել չէր կարող: Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր բնորոշ իմաստային ու գործառական կողմերը, և նախադասական ինչ-որ շրջանում է, որ հստակորեն է արտահայտվել սահմանական եղանակի (գրեցից) և ստորադասական եղանակի (գրիցեմ) հակադրությունը:

3. Լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար սկսել են խառնվել առաջին ապառնու և սահմանական եղանակի ապառնու (նկատի ունենք երկրորդ ասպառնին) սահմանները: Երկրորդ ապառնին դասական գրաբարում արդեն կիրառվում էր նաև այն դեպքերում, որոնք, ըստ երևույթին, մի ժամանակ բնորոշ էին միայն առաջին ապառնուն: Պարզ է, որ նման վիճակ լեզվի մեջ երկար գոյություն ունենալ չէր կարող: Այդպես էլ եղավ: Ծագասական շրջանում առաջին ապառնու գործածության ոլորտները ավելի ու ավելի էին սահմանափակվում: Նարեկացու «Մատենան»-ում, համարյա առաջին ապառնի չի գործածվում: Այն դեպքերում, երբ ըստ ուսումնասիրողների, դասական շրջանի հեղինակը օգտագործում է միայն առաջին ապառնի, նարեկացին դնում է երկրորդ ապառնի: Նույնն է վիճակը այդ շրջանի ուրիշ հեղինակների մոտ: Հովհաննես Մամիկոնյանի, Դրասխանակերտցու գործերում դարձյալ զգալապես կիրառվում է երկրորդ ապառնի: Հիշենք, որ գործածության տեսակետից արդեն նույնիսկ դասական շրջանում երկրորդ ապառնին գերազանցում էր առաջինին: Ագաթանգեղոսի պատմության 2—8 գլուխներում առաջին ապառնին գործածվել է 59 անգամ, իսկ երկրորդը՝ 130: Կորյունի մոտ մոտավորապես հավասար գործածություն ունեն, իսկ եթե հաշվենք Աստվածաշնչից կատարած մեջբերումները, ապա այստեղ ևս քանակական առավելությունը երկրորդ ապառնու կողմն է: Թուղանդի պատմության 4-րդ գլխից և 6-րդ գլխից առաջին ապառնին գործածված է 43, իսկ երկրորդ ապառնին՝ 103 անգամ: Դասական հեղինակներից միայն Ծղնիկն է, որ առաջին ապառնին ավելի շատ է գործածում: Նրա գրքի «Ծղծ աղանդոց հեթանոսացն» հատվածում 73 անգամ հանդիպում ենք երկրորդ, իսկ 237 անգամ՝ առաջին ապառնու: Սա կարելի է քաջատրեյ մասամբ նրանով, որ Ծղնիկը շատ հաճախ առաջին ապառնին կիրառում է այլ ժամանակների իմաստով:

4. Երբ խառնված են առաջին ապառնու (որը ուսումնասիրողները դիտում են որպես ստորադասական եղանակի ապառնի) և երկրորդ ապառնու (ուսումնասիրողների մեծ մասը համա-

րում է սահմանական եղանակի ժամանակ) սահմանները, ապա բնականաբար կարելի է հանգել այն եզրակացության, որ դասական գրաբարում ստորադասական եղանակի հատուկ գրսեփորում գոյություն չունի, այն պայմանական է ինչպես անվանումով, այնպես էլ էությունով:

Նկատի առնելով երկու ապառնիների կիրառական յուրահատկությունները, կարելի է ընդունել ստորադասականի երկու ըմբռնում:

ա) Ստորադասական լայն առումով. այստեղ երկու ապառնիները հավասարապես հանդես են գալիս հակադրվելով սահմանական եղանակի բաղադրյալ ապառնուն (գրեթե եմ), ուրեմն այս դեպքում երկու ապառնիներն էլ պետք է դիտել որպես ստորադասական եղանակի ժամանակներ:

բ) Ստորադասական նեղ առումով, երբ առաջին և երկրորդ ապառնիները հակադրվում են ըստ կիրառության ոլորտների: Այս դեպքում էլ ստորադասությունը ենթադրում է միայն հարցական և արգելական բնույթի նախադասություններ՝ սահմանափակվելով պարզ և բարդ համադասական նախադասության շրջանակներում:

Առաջնորդվելով այս սկզբունքով՝ առաջին ապառնին պետք է դիտել որպես ստորադասական եղանակի, իսկ երկրորդը՝ և՛ ստորադասական, և՛ սահմանական եղանակի ժամանակ: Սակայն, ինչպես նկատելի է, այս երկու ըմբռնումները վերջին հաշվով եղանակի հասկացության բնորոշման հետ այնքան էլ սերտորեն չեն առնչվում:

Սա էլ իր հերթին ստիպում է մի ավելորդ անգամ ընդգծելու, որ ստորադասական եղանակ հասկացությունը դասական գրաբարում խիստ մթաճելած էր:

Եվ վերջապես մի մոտեցման մասին:

Ըստ Ա. Աբրահամյանի՝ գրաբարի ստորադասական եղանակը ենթադրում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակները: Այս սկզբունքով առաջնորդվելով նա առաջին և երկրորդ ապառնիները համարում է ստորադասական եղանակի ժամանակներ⁵¹: Եղանակա-ժամանակային այդ համապատասխանությունը իրոք ճիշտ է:

Եթե այսպես վարվելով նշված ժամանակները համարենք ստորադասական եղանակի, ապա երկրորդ ապառնին պետք է դի-

51 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 109.

տել դարձյալ նաև որպես սահմանական եղանակի ապառնի, որովհետև, ինչպես դիտենք, այն հանդես է գալիս նաև սահմանական ապառնու կիրառությամբ:

Այս դեպքում պետք է անպայման ընդունել դարձյալ երկրորդ ապառնու երկեղանակային բնույթը դասական գրաբարում:

Մի խոսքով, գրաբարում ստորադասական եղանակի ձևաբանական հատակ արտահայտություն չկա, հետևաբար հատակորեն չեն երևում նաև նշված եղանակի իմաստային-գործառական յուրահատկությունները: Այնպես որ, ժամանակա-եղանակային հակադրության մեջ ստորադասական եղանակի և նրան վերագրվող ժամանակի մասին կարելի է խոսել միայն խիստ վերապահությամբ:

ԱՊԱՌԵՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՅԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՎ,

Գրաբարի ապառնի ժամանակների քննությունը թերի չթողնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև այդ ժամանակների երկրորդական կիրառություններին:

Փաստերը ցույց են տալիս, որ դասական գրաբարում երկրորդական կիրառությամբ ավելի շատ հանդես է գալիս առաջին ապառնին:

ա) Այն երբեմն հանդես է գալիս արդի հայերենի պայմանական, հարկադրական և հատկապես ըղձական եղանակների անցյալ ապառնիների փոխարեն (ինչպես գիտենք, գրաբարը այդպիսի եղանակա-ժամանակային հատուկ ձևեր չունի): Օրինակ՝ Քանզի ոչ եթէ կարօտ ինչ ոք իւիք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ իւր միայնոյ սեպհականեալ զկենդանութիւնն (Եզն., 8): Յումմէ կարօտանայր խնդրել որդի, որ գայցէ և զերկինս և զերկիր առնիցէ (անդ, 118):

բ) Առաջին ապառնին ավելի հաճախ հանդես է գալիս սահմանական եղանակի ներկա ժամանակի փոխարեն: Նման գործածությունները ապառնու երկրորդական կիրառության ամենահիմնական դեպքերն են դասական գրաբարում: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Նկատելի է նաև, որ ներկա ժամանակի փոխարեն առաջին ապառնին առավել շատ հանդես է գալիս հետևյալ դեպքերում:

1. Ուր, ուր, յուրժամ, եթե (թէ) բառերից հետո. Յորժամ ոք ընդ զնական արեգականս նայիցի, պշնելով և զնշմարելով ճանա-

չէ զպայծառութիւն լուսաւորութեան (Սերբեր., Ճառ, 1)։ Յորժամ թագաւորն ձեռն արկանիցէ, պարգեւաց մտրհակ անուանի (անդ, 5)։ Եւ իրք բազումք ի ջուրս յստակս բազում անգամ երեին լուսով ի մեջ նոցա, յորժամ կայցէ ոք գեր ի վերոյ և հայիցի և ներքս (Բրսղ., Բ, 30)։ Եթէ ոք կամիցի յամենայն լեզուաց նովին բանիւք զգորութիւն թարգմանել, չկացուցանիցէ յանդիման զբանիցին աւացելոց զմիտս (Կիրղ., մեկն. ս. Գրոց)։

Կարող է այստեղ առարկութիւն լինել հակառակ փաստի՝ ներկայի՝ ապառնու իմաստով հանդես գալու օգտին։ Սակայն ինչպես ներկա ժամանակի գործառական յուրահատկութիւնները, այնպես էլ բնագրի ընդհանուր բովանդակութիւնը վկայում են, որ իրոք նշված օրինակներում առաջին ապառնին է հանդես գալիս ներկայի իմաստով և ոչ թե հակառակը։

2. Երբ գործողութիւն կատարողը համեմատվում է մի ուրիշի, կամ գործողութիւնը՝ մի այլ գործողութեան հետ. նման է մանկըտոյ՝ որ նստիցին ի հրապարակս, կարգայցեն զընկերս իւրեանց և ասիցեն, փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք (Մտթ., ԺԱ, 16)։ Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ, թողուցու զտուն իւր և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն և իւրաքանչիւր զգործ իւր և դնապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցին (Մարկ., ԺԳ, 34)։ Հրապարակաց զհայր իւր քասնու Արգամայ, որպէս թէ թաղաւորել ի վերայ ամենայն խորհիցի (Աբեղ., 70)⁵²։

3. Հարցական նախադասութիւններում։ Բայց զանյոյզ զանքնինս հողապատեանս ի հողոյ զանգեալ զիա՞րդ քննել կարիցեմք և գիտել զԲարձրելոյն (Ագաթ., Խ, 286)։ Փոխիցե՞ն աստեղք առ միմեանս (Բրսղ., Զ, 121)։ Արդ ընդէ՞ր ոչ հանապազ ծնանիցին թագաւորք (անդ, 122)։ Եւ զիա՞րդ փիրք ասիցեն զօձեն գալ և խաբել և ընդ խաբեութեան առնուլ պատուհաս (Կիրղ., 4)։ Զի՞նչ է զոր դու գիաիցես և մեք ոչ գիաիցեմք (Յոր., ԺԵ, 9)։

Առաջին ապառնու հատկապես այս վերջին կիրառութիւնն այնքան տարածված է, որ այն կարելի է դիտել որպէս դասական գրաբարի ոճական առանձնահատկութիւններից մեկը։ Թոռնյանը հենց այդպես էլ գրում է. «Գրաբարի վայելչութիւնն է հարցական խոսքին բայը սահմանական ներկայի տեղ ստորադասական գրելը»⁵³։

⁵² Այս երևույթը նկատել է Մ. Աբեղյանը (տե՛ս Գրաբարի քերականութիւն, էջ 70)։

⁵³ Թոռնեան, Հետիւր ընթերցուածք..., հ. 1, Վիեննա, 1891, էջ 11։

Շատ հաճախ եմ պակասավոր բայի առաջին ապառնին է հանդես դալիս ներկայի իմաստով: Բայց ոչ ծանեան աշակերտք թէ Յիսուս իցէ (Յովհ., ԻԱ, 4): Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես գու (անդ, Դ, 19): Այս կիրառությանն ավելի շատ հանդիպում ենք հարցական բնույթի նախադասութիւններում. Իսկ ո՞վ իցէ, որ ոչ ցանկանայ մեծութիւն (Բուզ., 4, Ե, 129): Մի՞թէ բարբառ լոկ իցէ բախիւն լեզուի ընդ օդս (Ադաթ., 313):

Երբեմն էլ անցյալ դերբայ + օժանդակ բայ կառուցվածքում բայը դրվում է առաջին ապառնիով (իցեմ)՝ եմ-ի փոխարեն. Կամ թէ չիցէ տեսեալ քո զշուրս՝ զի ընթանան (Բրսղ., Դ, 69): Իցէ երբէք տեսեալ զբղխում աղբերականաց (անդ, 70): Ձիցէ ընթերցեալ ձեր, եթէ ի բերանոյ տղայոց և ստընդիցեաց Կատարեցեր զօրհնութիւն (Մտթ., ԻԱ, 16): Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթերցեալ ձեր (Մարկ., ԺԲ, 10):

Առաջին ապառնու բազմաթիվ ոչ պատահական գործածութիւնները ներկա ժամանակի իմաստով հիմք են տալիս եզրուկացնելու, որ դասական գրաբարում այնտեղ, որտեղ առաջին ապառնին հանդես է գալիս իր բուն կիրառությամբ, հնարավոր է նաև նրա ներկորդական կիրառութիւնը՝ ներկա ժամանակի իմաստով: Իսկ այս հանգամանքից ելնելով կարելի է հանգել մի այլ եզրակացութեան. արդեն դասական շրջանում խախտված էին առաջին ապառնու և սահմանական եղանակի ներկայի կիրառութեան սահմանները: Այդ է վկայում նաև այն, որ ներկա ժամանակն էլ, ինչպես արդեն ցույց ենք տվել համապատասխան տեղում, իր հերթին հաճախ հանդես է գալիս ապառնու փոխարեն: Հանդիպում ենք բազմաթիվ նախադասութիւնների, որտեղ բայերից մեկը արտահայտված է առաջին ապառնիով, իսկ մյուսը՝ (կամ մի քանիսը)՝ ներկա ժամանակով: Իհարկե, նման նախադասութիւններ կարող են լինել, բայց մենք նկատի ունենք այնպիսի օրինակներ, երբ անպայման կամ առաջին աստիճանի պետք է թարգմանվի որպես ներկա, կամ, ընդհակառակը, ներկան որպես ապառնի: Հսկառակ դեպքում նախադասութիւնը իմաստ չի ունենա: Օրինակ՝ Եւ տէր մեր յայտնեաց մեղ յասելն, թէ յորժամ տեսանիցէք զի գայ ամսյ յարեմտից և ստէք՝ թէ անձրև լինի և լինի (Բրսղ., Դ, 115): Կամ՝ Եւ այն զինչ իցէ զի զձայնաւոր նշանագիրսն, որ ընդ անձայնս խառնին՝ ոչ զրիցեն, այլ միայն զանձայնսն (Կիրղ., 5): Այստեղ խախտված են ներկա—առաջին ապառնի ժամանակային իմաստները: Այդպես է նաև հետևյալ նախադասութեան մեջ.

Եթէ ոք ոչ այսպիսի պայմանաւ թարգմանութեանն վարիցի բազում աշխատութիւն ընթերցողացն յաճախէ, առ ի զսրբելոյ զմիտսն հանդիսին՝ զոր առաջի դնիցէ (անդ)։

Առաջին ապառնու ներկայի իմաստով գործածութիւնը անհամեմատ շատ է Եզնիկի մոտ։ Նրա գրքի Ա—ԺԱ գլուխներում 27 անգամ առաջին ապառնին վերառւած է ներկայի փոխարեն։ Բոլոր օրինակները բերել հնարավոր չէ։ Նշենք մի երկուսը. Ապա թէ ինչ յարարածոց՝ որ գեղեցիկ է այն ի բարւոյ արարչէ կարծիցի ոմանց... մեր առաջին և նախադարձառ պատասխանի այն է (9)։ Նա և գողումն և սոսկումն ունի զարարածան, յորժամ զպատիւ արարչին ոք նոցա մատուցանիցէ և յայտ առնէ երկիր շարժելովն (16)։

Իսկ առաջին ապառնին բուն կիրառութեամբ հանդես է գալիս 36 անգամ։ Փաստորեն ապառնու բուն և ներկայի իմաստով կիրառութեամբ հարաբերակցութիւնը Եզնիկի մոտ հավասարվում է։

Առհասարակ նա շատ է սիրում ապառնին և ներկան գործածել կողք-կողքի։ Օրինակ՝ Եւ եթէ ճշմարտիւ ոք քննիցէ զսիրտսն զտանէ յանհարին վտանգս եկեալ (31)։ Նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ նույնպէս գտանի (90)։ Որպէս թէ յորժամ Կոռնոսն յատեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի (156)։ Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարին ոք ըմպիցէ սատակի (68)։ Եւ եթէ զչոր քամեալ անապակ ըմպիցէ ոք սատակի և եթէ զանման ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ (անդ)։

Եթե մենք դասական շրջանի այլ հեղինակների մասին կարող ենք ասել, որ նրանց մոտ արդեն առաջին ապառնին և ներկան հաճախ հանդես են գալիս միմյանց փոխարեն, ապա Եզնիկի մասին առանց վերապահութեան պետք է նշել, որ նա տարբերութիւն չի դնում այդ երկու ժամանակների միջև, այլ կերպ ասած՝ այդ երկու ժամանակաձևերով Եզնիկը հավասարապես արտահայտում է թե՛ ներկա և թե՛ ապառնի ժամանակների իմաստ։

գ) Առաջին ապառնին երբեմն հանդես է գալիս նաև սահմանական լեզանակի անցյալ ժամանակի իմաստով (անկատար կամ կատարյալ)։ Այս երևույթը իհարկե այնքան տարածված չէ, ինչպէս առաջին ապառնու՝ ներկայի իմաստով գործածութիւնը, բայց այնուհանդերձ փաստեր վան, թեև դրանք այնքան շատ չեն, որ ենթարկվեն որևէ դասակարգման։ Օրինակ՝ Ո՞վ իցե, որ սիրեաց զհիվանդութիւնն և ատեաց զառողջութիւնս (Բուզ., 130)։ Որք ըստ արժանական ախրոյն իցեն տպաւորեալ աստուածական սիրոյն, զնոսա եղբարս անուանեաց (Ագաթ., 437)։

Կարելի է առարկել, որ ընդգծված բայերը ունեն ոչ անցյալ, այլ ներկա ժամանակի իմաստ, բայց միևնույն նախադասության մեջ անցյալ կատարյալով դրված բայերը (սիրեաց, առեաց, առնուանեաց) հուշում են, որ իցէ և իցեն բայերն ունեն անցյալ ժամանակի իմաստ:

Ի տարբերություն առաջինի, երկրորդ ապառնին այլ ժամանակների իմաստով հազվադեպ է կիրառվում: Այդ տեսակետից դավելի «կայուն» քերականական ժամանակ է: Այն երբեմն հանդես է դալիս ներկա ժամանակի իմաստով: Ինչպես՝ Քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց որ պանծեցեն զբառն մարգարեութեան (Յայտն., ԻԲ, 9): Ս. Ղազարյանը այդ գործառութեան վերաբերյալ բերում է հետևյալ օրինակները. Որ յաճախէ զբառն իւր արհամարհեցն (Շատ խոսողը արհամարհվում է): Հզօրագոյն ի վերայ եկեալ՝ զսպառազինութիւն նորա հանէ ի նմանէ, և զաւար նորա բաշխեցէ⁵⁴: Ընդգծված բայերը կարող են ունենալ նաև ապառնու իմաստ (Շատ խոսողը կարհամարհվի և այլն): Այնպես որ հստակորեն չի արտահայտված ապառնի-ներկա հակադրությունը:

Գրաբարում համարյա չենք հանդիպում բաղադրյալ ապառնու երկրորդական կիրառության: Ապառնիություն արտահայտող քերականական ժամանակներից հատկապես առաջին ապառնին է, որ կատարում է այլևայլ ժամանակների գործառություն: Դա նշանակում է, որ արդեն V դարում խախտվել էին առաջին ապառնու բուն կիրառության օրինաչափությունները, մի հանգամանք, որը նույնպես ապաստեց այդ ժամանակաձևի ավելի վաղ անհետացմանը մեր լեզվից:

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻՆԵՐԻ ԿԵՐՊԱՑԻՆ ՐՆՈՒՑԹՃ

Գրաբարի որոշ ուսումնասիրողներ ընդունում են, որ ինչ-որ շրջանում առաջին և երկրորդ ապառնիները տարբերակվել են որպես բայական կերպի արտահայտիչներ:

Իր տեղում արդեն նշել ենք, որ ելնելով նշված ժամանակների համապատասխան հիմքերից, դրանց մեջ կարելի է տեսնել անկատար (առաջին ապառնի) և կատարյալ (երկրորդ ապառնի) կերպի արտահայտություն:

Քանի որ այդ ժամանակները ինքնին ենթադրում են կատարե-

⁵⁴ Ս. Ղ. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 407:

լի գործողություն, ապա նշված կերպային հատկանիշները ավելի կոնկրետ ձևով դրսևորվում են որպես միանգամ կատարվելիք ու վերջացվող (2-րդ ապառնի) և կատարվելիք ու շարունակվող (1-ին ապառնի) գործողության հակադրություն:

Հետևյալ օրինակում՝ Յորթամ քաղաքը և Գիւղը անբեսցին և անոգ դուրս բնակից են և կեղծս ի կեղծս խայտնիցին (Եղն., 98): Կողք-կողքի գործածված են երկրորդ և առաջին ապառնիներ (անբեսցին, բնակից են): Ոմանք նման գործածությունները պատահական չեն համարում և փապում են առաջին և երկրորդ ապառնիների կերպային յուրահատկությունների հետ: Զ. Անաոյանը այս հանգամանքը բացատրում է հետևյալ կերպ. «Ավերոմը միայն մի անգամ փապվ վերջացավ, իսկ դեմքի բնակությունը անբորոշ ժամանակով»⁵⁵:

Նման օրինակներ, անշուշտ, կան, բայց այն ընդունված կանոն չէ դասական գրաբարի համար: Երբեմն հանդիպում ենք հակառակ բնույթի օրինակների. Եւ որք լսիցենն կեցցեն (Յովհ., Ե, 28): Եթէ որ ուտիցէ ի հացէ յայսմանէ կեցցեն ի յաւիտեան (անգ, 2, 51): Այստեղ ի տարբերություն վերոգրյալի, առաջին ապառնիով արտահայտված են այն բայերը, որոնց նշած գործողությունները մի անգամ կատարվելու և ավարտվելու են, իսկ երկարատև, չափարտվող գործողությունները, ընդհանրապես, արտահայտված են երկրորդ ապառնիով: Կնշանակի՝ դասական շրջանում անկատարություն-կատարյալություն կերպային հատկանիշները այնքան էլ հատկորեն չեն տարբերակվում առաջին և երկրորդ ապառնիների կիրառության ժամանակ:

Նշենք, որ Ա. Մեյեն նույնպես ապառնիների համար հիմնական է համարում վերադասյին հակադրությունը:

Համեմատաբար ավելի ավանառու ձևով այդ երկու ժամանակների մեջ արտահայտվում են տեական և ոչ տեական կերպերը: Մեյեն այդ առիթով բերում է միայն մեկ օրինակ՝ քաղված Աստվածաշնչից. Կին յորժամ ծնանիցի տրտմութիւն է նմա զի հասեալ է ժամ նորա, այլ յորժամ ծնցի զմանուկն տշ ևս յիշէ զնեղութիւն վասորն խնդութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ⁵⁶, Իրոք, ծնանիցի-ն ենթադրում է տեական գործողություն, իսկ ծնցի-ն միայն գործողության ավարտն է՝ զուրկ որևէ տեականությունից: Բերենք այլ օրինակներ. Ապա եթէ անդանդաղ լինիցիս ճասանիցէ իբրև զաղբիւր

⁵⁵ Զ. Անաոյան, ԼՁՀ, հ. 4, էջ 81:

⁵⁶ *Melliet*, *Essquis...*, p. 92.

ամառն քո և կարօտութիւն իբրեւ այր մի շար, ինքնահալած լինիցի (Առակք, 2, 11): Եւ վասն այնորիկ, յանկարծակի հասցէ նմա կորուստ իւր հաշումն և մաշումն առանց բժշկութեան (անդ, 15):

Առաջին դեպքում ընդդժմած բայը դրված է առաջին ապառնիով, որովհետեւ ամառը գալու, հասնելու համար որոշ ժամանակ է պետք, միանգամից այն չի կարող հասնել: Իսկ մյուս դեպքում, ընդհակառակն, յաճկաբժակի ձեւի մակբայը հուշում է, որ գործողությունը տեւական չէ, այն վրա կհասնի ակնթարթորեն, և համապատասխան բայն չի գրված է երկրորդ ապառնիով:

Մեր կարծիքով, երկրորդ ապառնու կերպային բնույթը պայմանավորում են այդ ժամանակի որոշ առանձնահատուկ կիրառությունները: Ինչպես արդեն նշել ենք, բուն ըղձական իմաստով օգտագործվում է միայն երկրորդ ապառնին: Երկրորդ ապառնու այս յուրահատուկ գործածությունը կարելի է բացատրել նրանով, որ նման դեպքում ինչ-ինչ շարժվող առկա են հրամայական եղանակի բնորոշ տարրեր, իսկ այդ եղանակին բնորոշ է ոչ տեւական կերպը:

Ոչ տեւական կերպի հետ կարելի է կապել երկրորդ ապառնու կիրառութեան մի ուրիշ դեպք ևս: Հաճախ, հատկապես բանավեճային բնույթի գործերում, կարելի է հանդիպել նման օրինակների: Նախ հայեցեալ տեսցու՛մ գերկինս... (Բրսղ., Գ, 67): Արդ մեք թողեալ զնոսա, հարցցու՛մ զսոսա (Եզն., 117): Հարցցու՛մ և մեք, չարիքն որ լինին անձինք ինչ իցեն, թէ արգասիք անձանց (անդ, 27): Դարձեալ հարցցու՛մ զհիւղայն (անդ, 32): Եւ արդ տեսցու՛մ, հաւանք ինչ ընդ միմեանս էին բնութիւնք, ուստի հիւղն յօղեցաւ, թէ հակառակք իրերաց (անգ, 33): Նման դեպքերում, որպես կանոն, դրվում է երկրորդ ապառնի: Այստեղ ոչ տեւականութեան արտահայտութիւնն այն է, որ հեղինակը մի բան է հարցնում կամ ուղում է տեսնել ու ասել, անմիջապես հաջորդ տողերում այն բացահայտվում է՝ առանց տեւական ընդմիջման:

Կերպային յուրահատկութիւն կարելի է համարել նաև այն հանդամանքը, որ հրամայական եղանակով գրված բայի հետ հիմնականում հանդես է գալիս երկրորդ ապառնին: Այսպես՝ Այլ դու յոթժամ պահիցես, օժ զգլուխ քո և լուս գերեսս քո, զի մի երեսացիս մարդկան իբրեւ զպահող, այլ հօրն քում ի ծածուկ (Մտթ., 2, 17): Աղաչեցէ՛ք զտէր հնձոց, զի հաճցէ մշակս ի հունձս իւր (անդ, Թ, 38): Ուր են արքն, որ մտին առ քեզ գիշերի, աժ զնոսա առ մեզ, զի գիտասցու՛մ զնոսա (Ծննդ., ԺԹ, 5): Եկ և վայելեսցու՛մ սիրով

մինչև յառաջուն, եկ և իսաղացուի ցանկութեամբ (Առակք, է, 18): Թույլ տուր, նախ յագեսցին մանկունք (Մարկ., Ե, 26):

Տեական վերայի արտահայտութեան հետ մասամբ պետք է կապել նաև առաջին ապառնու վիրառութիւնը ներկա ժամանակի փոխարեն, որովհետև երկու ժամանակները կերպային խոր հակադրութիւն չունեն, և նշված կերպը ընդհանուր է թե՛ ներկայի և թե՛ առաջին ապառնու համար:

Ամփոփելով երկու ապառնիների կերպային բնույթի հարցը, կարող ենք եզրակացնել, որ նախադասական ինչ-որ շրջանում, անշուշտ, այդ երկու ժամանակների հիմնական տարբերութիւնները եղել են կերպային: Դասական շրջանում, ճիշտ է, կերպային հակադրութիւնը այդ երկու ժամանակների տարբերակիչ հատկանիշ չէ, բայց այնուհանդերձ արդիսի հակադրութիւն զգացվում է: Առաջին ապառնուն բնորոշ են տեական և մասամբ անկատար կերպերը, իսկ երկրորդ ապառնում՝ ոչ տեական և կատարյալ կերպերը: Նշենք նաև, որ տեականութիւն-ոչ տեականութիւնը ավելի ակնհայտ է արտահայտվում, քան կատարյալութիւն-անկատարութիւնը:

Այժմ ամփոփենք առհասարակ գրաբարի ապառնութիւն արտահայտող ժամանակների յուրահատկութիւնը:

Ինչ տարբերութիւններ ունեն գրիցեմ, գրեցից, գրելոց եմ և գրելոց էի քերականական ժամանակները:

1. Գրիցեմ—գրեցից: Կերպային հակադրութիւն կա: Երկու ապառնիների գործառական շատ ընդհանրութիւններ պայմանավորում են նշված ժամանակների եղանակային ընդհանրութիւնը: Սակայն նրանք նաև հակադրվում են որպես տարբեր եղանակների ժամանակներ, քանի որ, ի տարբերութիւն առաջին ապառնու, գրեցից-ը կատարում է նաև սահմանական ապառնու գործառութիւն:

Ժամանակային հաջորդականութիւն երկու ապառնիների միջև չի արտահայտված (որոշ լեզուներում երկու ապառնիների առկայութիւնը ենթադրում է գործողութեան նախորդում կամ հաջորդում, լատիներենն էլ ունի առաջին և երկրորդ ապառնի ժամանակներ, որտեղ երկրորդ ապառնին արտահայտում է այնպիսի գործողութիւն, որը կկատարվի ապագայում՝ նախորդելով առաջին ապառնիով արտահայտված գործողութեանը: Համարյա նույն յուրահատկութիւնն ունի futur anterieur-ը ֆրանսերենում):

Գրաբարի նշված ժամանակները անտարբեր են գործողութեան նախորդման կամ հաջորդման նկատմամբ:

2) Դրելոց եմ—գրելոց էի: Կերպային և եղանակային տարբերություններ չկան: Ժամանակային հաջորդականություն կա, որն արտահայտվում է եմ—էի օժանդակ բայերի միջոցով: Առաջին դեպքում գործողությունը կատարվելու է ներկա ժամանակակետի, իսկ երկրորդ դեպքում՝ մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ: Ինչպես՝ Դու միայն կալոց և մնալոց ես յաւիտեան (Աղաթ., է, 78): Կանխաւ գիտաց գնակորայ, թէ առաքինի լինելոց է (Եղն., 105): Այլ ղի գալոց իջանելոց էր Աստուածորդին և զամենայն ազգս վերացուցանելոց էր Աստուածութիւնն (Աղաթ., ՀԲ, 455): Ոչ վասն որդւոյ նորա ասիցէ, որ գալոցն էր (անդ, Ժ, 467):

3) Դրիցեմ—գրելոց եմ, գրեցից—գրելոց եմ: Առաջինում հիմնականը եղանակային հակադրությունն է (ոչ սահմանական—սահմանական), երկրորդում նշված հակադրությունը իրականանում է այն դեպքում, երբ գրեցից—ը հանդես է գալիս որպես գրիցեմ—ի գործառական համարժեք: Իսկ երբ գրեցից—ը հանդես է գալիս սահմ. եղանակի իմաստով, այդ դեպքում վերանում է նաև գրեցից—գրելոց եմ ձևերի եղանակային հակադրությունը: Կիրառության ժամանակ նշված ձևերի միջև կերպային հակադրություն չի զգացվում: Զևարանորեն գրեցից—գրելոց եմ ձևերի միջև կարելի է տեսնել կատարյալի և ներկայի հիմքերից կազմվող ձևերին բնորոշ կերպային հակադրություն:

Բացի նշված ժամանակաձևերից, գրաբարում ապառնիություն արտահայտվում է ի մասնիկով վերջացող դերբայի միջոցով: Քանի որ վերջինիս կիրառությունը շատ սահմանափակ է, մենք չենք մտցնում ժամանակների վերոգրյալ հակադրության մեջ: Նշենք միայն, որ այդ ապառնին հանդես է գալիս արդի գրական լեզվի հարկադրական եղանակի ապառնու գործառությամբ, կամ արտահայտում է կարելիություն: Ինչպես՝ Այդպես իմանալի է բանս և ոչ որպէս Մարկիոնն դանդաշէ (Եղն., 293): Ըստ նմին օրինակի և Պաւղոսի զերրորդ երկինսն իմանալի է (անդ, 262): Քանզի և մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է, այլ արգահատելի (Եղն., 49):

Ապառնիների գործառական յուրահատկությունների մասին կարելի է ասել հետևյալը.

ա) դասական գրաբարում առաջին ապառնին ունի կիրառության իր բնորոշ ոլորտները.

բ) երկրորդ ապառնին կիրառության ավելի մեծ սահմաններ է ընդգրկում, քան առաջինը.

գ) երկրորդ ապառնին ներառում է նաև առաջին ապառնու կիրառության ոլորտները.

դ) բաղադրյալ ապառնին կիրառության համեմատաբար ավելի փոքր շրջանակներ է ընդգրկում՝ մյուս ապառնիների համեմատությամբ.

ե) բաղադրյալ ապառնու գործառնությամբ հանդես է գալիս նաև երկրորդ ապառնին:

Նշված քերականական ժամանակները կատարվելիք գործողությունների արտահայտման հիմնական միջոցներն են: Սակայն գրադարում երբեմն ապառնության իմաստ կարող են արտահայտել որոշ բայեր՝ դերբայի հետ գործածվելիս: Նշված կիրառությամբ ավելի հաճախ հանդես է գալիս ունիմ բայը: Օրինակ՝ Զպատանիս տայս տար առ հաղարապետին, զի ունի ինչ պատմել (Գործք առաք., ԻԳ, 17): Մկրտություն մի ունիմ մկրտել (Ղուկ., ԺԲ, 50): Այլ մեք զցատոց և զմահուան բաղում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել (Յզն., 71): Ա. Աբրահամյանը բերում է ուրիշ օրինակներ այլ բայերով. Բայց ի կղզի ինչ ճառագեղ մեզ անկանել (Բայց մենք մի կղզի ենք ընկնելու): Հասանել քեզ մարգարեանալ: Որ հանդերձեալ է գալ (Որ գալու է)⁵⁷:

Այդ դերը երբեմն կատարում են նաև կամ, կամիմ բայերը: Օրինակ՝ Բայց մեզ դեռ կայ պատմել ձեզ զծնունդ աստուածորդւոյն, որ ի կուսէն (Ագաթ., Բ, 290): Մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին Քրիստոսի (Զալլիս.—Այտ., 369): Ապագայում կատարվելիք գործողությունները կարող են արտահայտվել նաև այլ միջոցներով:

Նշված դեպքերում մենք գործ ունենք ոչ թե ժամանակի քերականական կարգի, այլ ժամանակավորման հետ: Վերը բերված օրինակները ժամանակավորման մասնակի դրսևորումներն են:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. — Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1862:

Բագր. — Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի աւետս զարգացելոց, Վենետիկ, 1852:

Բրսղ. — Սրբոյ Բարսղի Եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացւոյ ճառք վասն վեցօրեայ արարչութեան, Վենետիկ, 1830:

Բուղ. — Փատտոսի Բիւղանգացւոյ պատմութիւն հայոց, Քիֆլիս, 1912:

⁵⁷ Ա. Աբրահամյան, Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 281:

Եզն. — Եզնկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եւագր. — Գիրք ութն խորհրդոյ մեղաց արարեալ սրբոյն հօրն Նաղդեայ, Պոլիս, 1752.

Եւսեր. — Եւսերի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանականք ևրկմասնեաց, մասն Ա, Վենետիկ, 1818:

Բ-դԲ. ՍՀԿ. — Սրբոյն Սահակայ պատմութիւն վարուց և թուղթթ, Վենետիկ, ՌժԲ:

Կիրդ. — Երանելոյն Կիրդի Երուսաղեմայ Հայրապետի կոչումն ընթայութեան, Վիեննա, 1832:

Կոր. — Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Ոսկ. Մ. Ես. — Յովհաննու Ոսկերերանի մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880:

Ոսկ. (Ոսկր.) — Մ. Պ. Յովհաննու Ոսկերերանի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Վենետիկ, 1862:

Ջալլիս.—Այտ.—Հ. Վրթանիսի Ջալլիսեան, Քերականութիւն Հայկազնեան լեզուի, Հանդերձ փոփոխմամբք և յաւելումովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այարնեան, Վիեննա, 1885:

Սերեր (ճառ). — Սերերիանոսի Եմեսացւոյ դարադացւոյ Լախակոպոսի ճառք, Վենետիկ, 1830:

Վկայք — Արրահամու խոստովանողի վկայք Արեւելից, Էջմիածին, 1921:

Վարք (Վրք. հրեց.) — Վարք սրբոյ հարանց, Վենետիկ, 1855: